



25-26(418-419)  
31.08.2015  
Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխարկ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԻՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԲԱՐԻ ՄԵԿՆԱՐԿ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԻՆ

Կրկին հարազատ դպրոցի կամարների տակ վերադառնալուց հետո վերհուշների հիմնական թեման երևի աննախադեպ շոգն է լինելու: Ինչ արած, դա էլ յուրօրինակ փորձություն էր արցախցիներիս (և ոչ միայն) համար: Եվ այդով հանդերձ, կարծում ենք, անցած ամառը նույնպես հետաքրքիր իրադարձություններով հագեցած է եղել: Ոմանք ճամբարային կյանքից պատմելու բան կունենան, մյուսները գուցե հաճույքով կհիշեն կապուտաչյա Սևանի ալիքների ծփանքը և այլն: Առույզ մարմնով ու մտքով դպրոցական ռիթմի մեջ մտնելն իր առավելություններն ունի. էլ ուրիշ որտե՞ր պիտի սպառել կուտակված էներգիան, եթե ոչ ուսման մեջ:

Խոստովանենք, տևական բացակայությունը նաև կարող է կուտակել: Մեր ուսուցիչները միշտ կատակով ասում են, որ դպրոցականներն ամենից շատ ուրախանում են ամառային արձակուրդներից առաջ և հետո: Բաժանվում են՝ իրարից չհոգնած, բայց ահա վերադառնում են՝ իրար անչափ կարոտած: Ընդունելով այս նկատառումը, միաժամանակ հավելենք՝ աշակերտները նաև իրենց սիրելի ուսուցիչներին են կարոտել, որովհետև կրթօջախը ուսումնառության ընթացքում դպրոցականի համար երկրորդ տուն է դառնում, ուսուցիչներն էլ իրավամբ՝ երկրորդ ծնողներ:

Ուսումնական խանդավառությամբ համակված են նաև բուհերի և միջնակարգ մասնագիտական հաստատությունների ուսանողները, արհեստագործական ուսումնարանների սաները: Նրանց ուրախությունը թերևս տարիքային առումով ավելի հասուն ու զուսպ է, բայց տոնական զգացողությունն ընդհանրական է, քանզի մեկնարկում է ուսանողական կյանքի նոր փուլը, որը զարմանահրաշ նոր աշխարհներ պիտի բացի իրենց ուսումնաստենչ հոգու առաջ:

Իսկ ուսումնական տարվա առաջին օրն սկսվում է Գիտելիքի օրվա նշումով: Տոնական հանդիսությունները, որոնք տեղի են ունենում կրթօջախներում, ևս մեկ անգամ ընդգծում են գիտելիքի կարևորությունը մարդու կյանքում: Ազգի լուսավոր ապագան կերտում են կիրթ և ուսյալ սերունդները, և հենց այս առաջնահերթությամբ առաջնորդվելով՝ մեր պետությունն ամեն ինչ անում է Արցախում որակյալ կրթություն ապահովելու համար:

Հավատանք՝ 2015-2016 ուսումնական տարին լինելու է կրթության և գիտության բնագավառում նոր ձեռքբերումների տարի:

Բարի՜ մեկնարկ մաղթենք նոր ուսումնականին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ԼՂԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱԿԱ ԱՄՐՅԱՆԻ ՉՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ



Սիրելի՜ աշակերտներ և ուսուցիչներ, ուսանողներ և դասախոսներ, հարգելի՜ ծնողներ, շնորհավորում են ձեզ Գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ: Նոր ուսումնականի մեկնարկը բոլորիս տոնն է, քանզի կրթությունն ու գիտությունը

հայ ժողովրդի համար եղել և մնում են որպես ապագայի հուսալի այցեքարտ: Մեր պետականության ամրապնդման գործում առաջնահերթ է կրթության որակի ապահովումը, և տարեցտարի այս ոլորտում արձանագրվող ձեռքբերումները վկայում են, որ Արցախում իրոք բավարար հիմքերի վրա են կրթությունն ու դաստիարակությունը, ինչը մեր համատեղ ջանքերի դրսևորման արդյունք է:

Հանրակրթական, արհեստագործական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողներին մաղթելով հաջող ուսումնական տարի՝ ուզում են նաև այն համոզմունքը հայտնել, որ այդ հաջողություններն անվերապահորեն պայմանավորված են լինելու մասնավորապես ու դասախոսների նվիրյալ աշխատանքով, ուստի աշխատանքային նոր լիցքեր ու եռանդ են մաղթում նրանց: Տոնական այս օրն առանձնակի ջերմու-

թյամբ իմ բարեմաղթանքներն են հղում նաև առաջին դասարանցիներին ու նորաթուխ ուսանողներին. թող ուսումնական տարում նրանց միշտ ուղեկցեն գիտելիքի հանդեպ սերն ու ոգևորությունը:

Իմ ջերմ շնորհավորանքներն են հղում նաև ՀՀ և Ափսյունքի մեր գործընկերներին:

Խորհրդանշական է, որ Գիտելիքի, գրի և դպրության օրվա հաջորդում է համաժողովրդական տոնը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման օրը: Այս հրաշալի տոնի առիթով ևս շնորհավորելով՝ պատգամում են հավատարիմ լինել Արցախի ազատության ու անկախության վեհ գաղափարին, որը հայոց նորոգյալ պատմության ու կյանքի գրգռիչ և մեր հայրենի ու զավակների ամենուրեք պայքարով:

Կրկին շնորհավորելով բոլորիս համար թանկ այս տոների առթիվ՝ մաղթում են հետագա հաջողություններ ուսման մեջ և աշխատանքում:

## ՉՆՈՐՀԵՐՈՒՄՆԵՐԸ ՔԻՉ ՉԵՆ, ԽՆԳԻՐՆԵՐԸ՝ ՆՈՒՅՆՊԵՍ

Հարցազրույց ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանի հետ

- **Պարոն Ասրյան, նոր ուսումնականի մեկնարկը լավ առիթ է կրկին անդրադառնալու անցած ուսումնական տարում կատարված աշխատանքներին, առանձնապես այն հետևակները, որոնց վրա պետք է խարսխվեն հետագա հաջողությունները, ինչպես նաև մասնակցելու խնդիրները, որոնք խոչընդոտում են առաջընթացին՝ գտնելու դրանց լուծման ուղիները: Այս առումով ի՞նչ կարևոր կետեր կառանձնացնեիք:**

- Նախ կուզենայի տեղեկացնել մի ուրախալի փաստի մասին: Նախնական տվյալներով՝ 1-ին դասարան կընդունվի ավելի քան 2800 երեխա: Սա ամենաբարձր ցուցանիշն է վերջին քսան տարվա ընթացքում (դա հիմնականում կապում ենք արցախյան մեծ հարսանիքի հետ): Այս դիմամիկան սկսվել է վերջին 5 տարում. 2000 աշակերտների ընդունելության սահմանը վաղուց ենք անցել: Դիտարկումները ցույց են տալիս, որ հետագա տարիներին էլ աճի միտում կլինի: Եթե անգամ որոշ չափով քիչ լինի առաջին դասարանցիների թիվը՝ միևնույն է, 2500-ի բնագիծը կպահպանվի:

Բոլոր շրջաններում էլ առաջին դասարանցիների թվաճ է նկատվել, ընդ որում, Ստեփանակերտում երևի մինչև 1050 աշակերտ կընդգրկվի:

- **Հիրավի, ոգևորիչ ցուցանիշներ են: Այժմ պատմեք, խնդրեմ, նոր ուսումնականին պատրաստության մասին՝ ըստ ոլորտների:**

- 2015-2016 ուսումնական տարում կշարունակվեն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ ըստ կրթական աստիճանների: Հատկապես նախադպրոցական կրթության ոլորտում նախորդ ուստարում բավականին աշխատանքներ են կատարվել ցանցի ընդլայնման, նոր մանկապարտեզների բացման ուղղությամբ: Շահագործման են հանձնվել 9 նոր մանկապարտեզների շենքեր, և 6-ը շահագործման կհանձնվի նոր ուսումնականում: Ասել է թե՛ իրականացվում է ԼՂՀ Նախագահի նախընտրական ծրագրով նախատեսված և կառավարության գործունեության ծրագրում ներառված՝ նախադպրոցական ցանցի ընդլայնման գործընթացը: Այն իրականացվում է ինչպես մանկապարտեզների, այնպես էլ դպրոցներում գործող նախադպրոցական խմբերի ձևով: Ներկա դրությամբ մեր հանրապետությունում գործում են 47 մանկապարտեզ (որից 32-ը՝ պետական), 3 մանկական կենտրոն, 62 նախադպրոցական խմբեր, որից 5-ը՝ մանկապարտեզային պայ-

մաններով: Ստեփանակերտի հ. 2, 9, 10 դպրոցներում, ինչպես նաև Հարավ և Հարություն գոյներ համայնքներում առանձնացված մանկապարտեզների շենքեր են կառուցված, սակայն գործում են հանրակրթական դպրոցներին կից:

Դպրոցաշինությունը նույնպես մեր իշխանությունների ուշադրության կենտրոնում է: Անցած ուստարում 5 նոր դպրոցական շենքեր են կառուցվել՝ Ստեփանակերտի հ. 1, 6, Ասկերանի շրջանի Աստղաշենի, Մարտակերտի շրջանի Չափարի, Քաշաթաղի շրջանի Արտաշավի միջնակարգ դպրոցները: Եվս 6 դպրոցաշենք կառուցման ընթացքում է, հավանաբար, եկող ուսումնականում դրանք էլ շահագործման կհանձնվեն: Իսկ մի շարք դպրոցներում, մասնավորապես, Ստեփանակերտի հ. 9, Սիջնավանի, Թալիշի դպրոցներում, վերակառուցման աշխատանքներ են ընթանում: Ամառվա ընթացքում հատկացված գումարների սահմաններում ընթացիկ վերանորոգման են ենթարկվել այն դպրոցները, որոնք դրա անհրաժեշտությունն ունեին: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել ձմռան աշխատանքների ապահովման ուղղությամբ՝ վառելիքայտի մթերում, կաթսայատների նորոգում և այլն:

Հանրակրթությունում՝ որպես գերակա ուղղություն, ավագ դպրոցի զարգացման խնդիրներն են իրականացվում: Այստեղ և՛ տեխնիկական հագեցվածության, և՛ մասնագետներով ապահովման, և ընդհանուր բնույթի մի շարք կազմակերպական հարցեր կգտնվեն նախարարության ուշադրության կենտրոնում, չնայած այն համեմատման, որ եկող ուսումնական տարում ավագ դպրոցները թերհամալրված կլինեն 9-րդ դասարանցիների՝ համեմատաբար քիչ թողարկման պատճառով: Այդ իսկ պատճառով միջին մասնագիտական ու արհեստագործական կրթության գծով սովորողների պակաս նույնպես կունենանք:

Կշարունակեն գործել հանրապետությունում առկա 31 արտադպրոցական ուսումնական հաստատությունները, այդ թվում՝ ՄՊՍԿ-ներ, մարզադպրոցներ, արվեստի, երաժշտական դպրոցներ: Տարեցտարի ընդլայնվում է նաև դրանց ցանցը, իսկ շրջանային արտադպրոցական հաստատություններում՝ նաև ըստ բնակավայրերի ենթաշրջանային խմբակների գործունեությունը:

- **Պարոն Ասրյան, նկատի առնելով, որ նախարարությունը վերականգնակերպվել է կր-**

**թության, գիտության և սպորտի նախարարության: Ի՞նչ նոր ձեռնարկումներ են նախատեսվում այդ ուղղությամբ:**

- Անկասկած, դպրոցական սպորտի հետ մեկտեղ, մեր ուշադրության կենտրոնում կգտնվեն մարզական բոլոր միջոցառումները, աշխատանքներ կտարվեն ֆեդերացիաների հետ: Ասեմ նաև, որ արդեն ԼՂՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացված «Ֆիզկուլտուրայի և սպորտի մասին» օրենքի նախագիծը, որն ավելի կկոնկրետացնի մեր աշխատանքներն այդ ոլորտում:

- **Իսկ արհեստագործական կրթության ոլորտում կա՞ն նոր ծրագրեր:**

- Նոր ուսումնականից կգործի Շուշիի «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանը, որն իր կառուցվածքով, շենքային պայմաններով, մասնագիտություններով, ուսումնական պլաններով, ուսումնառության առանձնահատկություններով գործելու է ֆրանսիական մոդելով: Ուրախալի է այն հագամանքը, որ 9-րդ դասարանի շրջանավարտների սակավության պայմաններում կարողացել ենք համալրել պահանջվող 60-ի հասնող դիմորդների քանակը: Իրենց գործունեությունը կշարունակեն մյուս երկու՝ Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարանները: Թեպետ այստեղ էլ սովորողների թեղիքային պայմաններում կհիմնական մասնագիտությունների գծով դիմորդներ ապահովվել են:

Ավելացնեն նաև, որ միջին մասնագիտական հաստատությունները, քիչ թվով դիմորդներով հանդերձ, ապահովել են բավարար ընդունելությունը:

- **Ներկայացրեք, խնդրեմ, բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող աշխատանքները:**

- Ինչ մնում է բարձրագույն կրթությանը, ասեմ, որ այս տարի ԱրՊՀ առկա ուսուցման համակարգ ընդունվել է 474 դիմորդ, «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ՝ 81, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան՝ 8, «Գրիգոր Նարեկացի»՝ 2, «Գյուլջյան» կիրառական արվեստի ինստիտուտ՝ 12: Այս տարի ՀՀ պետական բուհերում կսովորի համեմատաբար ավելի շատ՝ 119 հոգի, որից 66-ը՝ ԼՂՀ-ին հատկացված անվճար տեղերում, մի մասի ուսման վճարն էլ, մասնավորապես այն մասնագիտությունների գծով, որոնց խիստ պահանջարկ կա, կփոխհատուցի ԼՂՀ կառավարությունը:

ԸՆԹԱՅԸ

Օգոստոսյան խորհրդածրոյներ

ԼԱՎ ՌԻՍՈՒՅԻՉԸ ՉԵՆԱՍՎՈՒՄ Է

Օգոստոսի 21-29-ը հանրապետության բոլոր շրջաններում և մայրաքաղաք Ստեփանակերտում անցկացվեցին մանկավարժական աշխատողների ավանդական խորհրդածրոյներ, որտեղ վերլուծվեցին անցած ուսումնական տարում կատարված աշխատանքները և նշվեցին խնդիրները, որ պետք է լուծվեն նոր ուսումնականում: Խորհրդածրոյներին մասնակցել են ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Արյանը, փոխնախարար Միքայել Գալստյանը, կրթության պետական տեսուչ Սոս Արզումանյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը:

ԳԹԿ տնօրենն անդրադարձել է արտաքին ընթացիկ գնահատումների, 9-րդ դասարանի ավարտական, միասնական քննությունների արդյունքներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատմանը: Ստույգ է, որ 4-11-րդ դասարանների սովորողների արտաքին ընթացիկ գնահատումից ամենաբարձր դրական և բացասական միավորներով ուսումնական հաստատությունները, 9-րդ դասարանի հայոց լեզու և գրականության ու մաթեմատիկայի կենտրոնացված քննությունների արդյունքների առթիվ իր մտահոգությունը հայտնել «գերազանց»-ների փոքր թվի առնչությամբ և հակառակը՝ ուրախությամբ փաստել, որ միասնական քննություններում ավելացել է «գերազանց»-ների քանակը: Ցավալի է, որ առկա են միասնական ավարտական մասով «անբավարար»-ներ, այդ թվում՝ բոլոր ավագ դպրոցներում: Համեմատած միտքերի տարիների հետ՝ ռազմամարզական ուսումնարանի շրջավարտները միասնական քննություններում ավարտական մասով «անբավարար» չեն ստացել:

Տեղեկացրեց, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների այլ դպրոցներ տեղափոխվելու դեպքում իրենց անձնական գործի մեջ անպայման պետք է ունենան կրթության առանձնահատուկ պայմանների մասին վկայագիր, կրթական կարիքների գնահատման բաժնիների կողմից տրված արձանագրությունը և անհատական ուսուցման պլանը: Անդրադառնալով շտեմարանների մասին ուսուցիչների մտահոգությանը՝ ասաց, որ դա ցավոտ հարց է, քանզի դպրոցներում, հատկապես վերջին դասարաններում, դասավանդում են շտեմարաններով: Այնինչ շտեմարանը դասազոր չէ: Ուսուցումը պետք է կատարվի ըստ ուսումնական ծրագրի և հաստատված պետական չափորոշիչների:



Շտեմարաններն ընդամենն առաջադրանքների ժողովածու են, օժանդակ նյութ: ԿԳՍ կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանն անդրադարձավ հաշվետու ժամանակահատվածում տեսչության կողմից կատարված աշխատանքներին, որոնց վերաբերյալ ծավալուն վերծրոյություն է տպագրվել «Լուսարար»-ի հ. 21-22-ում: Հանրակրթական դպրոցներում տիրող վիճակի մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար տեսչապետն այս տարի առաջին անգամ հաշվետվություն մեջ մտքոր է նաև ուսուցչական կարգերի՝ ստուգված ուսուցիչների թվին համապատասխան մակարդակը: Նա հակասություն արձանագրեց «լավ» գնահատված ուսուցիչների և դասավանդած առարկայի դրվածքի միջև: Նշանակում է՝ այստեղ կան չլուծված խնդիրներ, հնարավոր է՝ լավ ուսուցիչ է, բայց լավ չի դասավանդում, կամ էլ առարկայի մյուս ուսուցիչները լավ չեն աշխատում, և արդյունքում ունենք այն, ինչ ունենք:

Փոխնախարար Ս. Գալստյանը անդրադարձավ արձանագրեց երեխաների թվին, նախադրողական հաստատությունների և խմբերի քանակի, հետևաբար և՛ երեխաների ընդգրկվածության աճը: Եթե 2013-2014-ին ունեինք 50 խումբ՝ 1123 երեխաների ընդգրկմամբ, 2014-2015-ին կար 61 խումբ՝ 1427 երեխաների ընդգրկմամբ: Այս տարի 2824 երեխա կգնա առաջին դասարան: Փոխնախարարը կանգ առավ նաև դպրոցների տեխնիկական զինվածության, դրա արդյունավետ օգտագործման վրա՝ ասելով, որ համապատասխան քիչ դիտարկվում որպես ինչ-որ էկզոտիկ երևույթ, այլ որպես ուսումնական գործիք: 143 դպրոց միացած է համացանցին, մնացած դպրոցների հարցերը քննարկվում են, տեխնիկական հնարավորության դեպքում դրանք ևս կմիացվեն: Համացանցը հնարավորություն տվեց միանալ «Dasaran.am» ծրագրին: Ըստ նրա դիտարկումների՝ դպրոցների մի մասն այս առումով աշխատում է լիարժեք, մի մասը՝ ոչ լիարժեք, իսկ երրորդ մասը՝ թերարժեք: Շարունակվում է համագործակցությունը «Լյբ» և «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրների հետ: Արցախի դպրոցականները հաջողությամբ մասնակցում են նրանց կողմից անցկացվող «Մեղու», «Կենդանու», «Ռուսական արջուկ», «Դիջիթեք»։ «Էկոտուր» մրցույթներին:

Ավագ դպրոցի 7 երեխա մասնակցել է «Լյբ» դպրոցում Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի կողմից իրականացվող՝ «Շրջված դասախոսակներ» մեթոդով դասընթացներին: Փոխնախարարը բոլոր դպրոցներին շնորհակալություն հայտնեց «Հիշում եմ և պահանջում» խորագրով անցկացված՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման համար:

Ձեռքբերումները քիչ չեն, խնդիրները՝ նույնպես

Սեպտեմբերի 2-ին Շուշիում կրթական ազդարային համալսարանի մասնաճյուղի նորակառույց շենքը՝ ամհրաժեշտ պայմաններով: Սա, անշուշտ, խթան կհանդիսանա բուհի կայացման համար, ինչպես նաև կնպաստի, որ Շուշին դառնա բարձրագույն կրթական կենտրոն:

**- Իսկ ի՞նչ կասե՞ք կրթության մյուս տեխնիկական բազայի, տեխնիկական վերազինման մասին:**

- Անկասկած, պայմանները միշտ էլ վճռորոշ դեր են կատարում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Ոչ միայն շենքային պայմանների, այլև նրա կառավարման, տեխնիկական վերազինման պայմաններում է հնարավոր ուսման առաջընթաց արձանագրել: Այս ուղղությամբ աշխատանքներ, իհարկե, կատարվում են, բոլոր նորակառույց շենքերում էլ համապատասխան ապահովվածություն ունեն, բայց դա դեռ բավական չէ: Մենք ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ անելիքներ դեռևս շատ ունենք, ընդհանրապես կարողացել ենք դպրոցներն ապահովել նվազագույն թվով համակարգիչներով կամ համակարգչային դասարաններով: Չուզահեռ ընթացում են համացանցի միացման աշխատանքներ. 143 համակրթական դպրոցներ օգտվում են համացանցից: Դպրոցներում գործում է «Dasaran.am» ծրագիրը՝ դարձյալ ըստ համացանցային ընդգրկվածության: Նկատում ենք դրական գործունեություն այն առումով, որ ուսուցիչները տիրապետում են համակարգիչին, ինչպես նաև ծնող-ուսուցիչ կապ է ապահովվում: Այն կառավարման արդյունավետ մոդել է, որի վրա խիստ ուշադրություն ենք դարձնում: Ապագայում մեր նպատակն է լինելու ստեղծել միասնական դպրոցական ցանց, որը միանալու է Հայաստանի ընդհանուր ցանցին և ապահովելու է դպրոցների կապն ու կառավարումը, տեղակայվելու են ուսումնական բոլոր մյուսերը: Այս համատեքստում մենք խնդիր ունենք բարձրացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը: Առաջիկա ուսումնական տարվա մեր գերակա խնդիրը լինելու է ուսուցիչների վերապատրաստումը: Դա կարևոր է, նախ՝ ուսուցիչների ատեստավորման, ապա՝ նրանց մասնագիտական կարողությունների զարգացման ու ժամանակակից ուսուցման մեթոդներին նրանց հարողորակից անելու առումով: Ամեն տարի շուրջ 1000 ուսուցիչ ենք վերապատրաստում:

Մեր դպրոցները հիմնականում ապահովված են կահույքով, գույքով: Լուրջ խնդիր ունենք առարկայական կաբինետների համալրման ուղղությամբ՝ ֆիզիկայի, քիմիայի աշխատանքի ուսուցման...

**- Կարող ե՞ք հարցը, բնականաբար, կարևորագույնն է, ամեն օր հայտարարություն ենք լսում ուսուցիչների թափուր տեղերի մասին: Ինչպե՞ս է լուծվում հարցը:**

- Ունենք մասնագետների պահանջարկ հեռավոր շրջաններում, հատկապես ծայրամասային գյուղերում: Հենց այս անվազը ընթացքում, ըստ հայտարարված մրցույթների, դպրոցները համալրվել են մասնագետներով: Ասկայն մենք վերջնականապես չենք կարողացել լուծել հատկապես վերաբնակեցվող շրջաններում մանկավարժներով համալրման հարցը: Պատճառներից մեկն այն է, որ այստեղ բնակելի տներ չկան ուսուցիչների համար: Բացի այդ, որոշ առարկաների գծով ժամերը քիչ են, և մասնագետը շահագրգռված չէ գնալ աշխատելու: Դրա համար օգոստոսյան խորհրդածրոյներում մեր մանկավարժական կոլեկտիվներին առաջ խնդիր ենք դնում ուշադրություն դարձնել տեղական մասնագետների պատրաստման վրա, սովորողներին կողմնորոշել դեպի այն մասնագիտությունները, որոնց կարիքը տվյալ տարածաշրջանում ունի: Գործում է նաև կառավարության սահմանած արտոնությունը, որի համաձայն՝ դրույթի 50 տոկոսի չափով աշխատավարձ, բնակարանի վարձ տրվում է գյուղական բնակավայր գործուղված մասնագետներին: Ներկա

դրությամբ՝ շուրջ այդպիսի 150 աշխատող ունենք:

**- Օգոստոսյան ավանդական խորհրդածրոյներ են անցկացվում, որոնց բոլորին Դուք մասնակցում եք: Ի՞նչ ընդհանրական խնդիրներ են բարձրացվում:**

- Նախ ասեմ, որ ներկա ցուցանիշները մեզ գոհացնում են այն առումով, որ առաջընթաց, թեկուզ դանդաղ քայլերով, նկատելի է մեր գործունեության բոլոր ոլորտներում: Երբ համեմատության մեջ ենք դնում աշակերտների ցուցաբերած գիտելիքները միասնական քննությունների, արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ, առարկայական օլիմպիադաներում, նկատում ենք այդ առաջխաղացումը: Իհարկե, մեզ դեռևս չեն գոհացնում բնագիտական առարկաների գծով արդյունքները. այստեղ մենք մտահոգվելու առիթ ունենք, և ես սա կապում եմ մասնագետ ուսուցիչների պակասի հետ:

Աշակերտների ընդունակությունները միատեսակ են, պարզապես նրանք համար պետք է ստեղծել միջավայր, որտեղ կաշխատեն այնպիսի հմուտ ուսուցիչներ, որոնք կկարողանան նպատակաուղղել երեխաների աշխատանքը: Այս հարցերով մենք միշտ բարձրաձայնում ենք: Առաջին հերթին պիտի ուժեղացնենք մանկավարժական մասնագիտությունների նկատմամբ շրջանակներում կողմնորոշումը, որպեսզի լավագույն երեխաներն ընտրեն մանկավարժի մասնագիտությունը: Հիմնականում միջակ և դրանից էլ ցածր կարողություններով շրջանակարտներն են դիմում մանկավարժական մասնագիտությունների: Եթե կարողանանք ճիշտ սերնդափոխություն կատարել, այս խնդիրները լիարժեք կլուծվեն: Ես միշտ ասում եմ, որ դպրոցում եթե այդ որակյալ միջուկը կազմավորված է, օլիմպիադաներում, ինտելեկտուալ խաղերում, այլ կարգի մրցույթներում ցանկալի արդյունք ստանում ենք: Դպրոցի համար ոչ այնքան աշխարհագրական դիրքը նշանակություն ունի, որքան այն, թե ինչ մասնագետ է աշխատում այնտեղ: Բերենք թեկուզ Քաջաթաղի շրջանի փոքրիկ Կարդուս գյուղի դպրոցի օրինակը: Ընդամենը 19 աշակերտ ունեցող դպրոցը և օլիմպիադայի հաղթող է տալիս, և Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի ուսանող, և՛ Դիլիջանի միջազգային դպրոցի սովորող (ի դեպ, ամբողջ Արցախում առաջինը և միակը):

**- Ասում են՝ ինչպես հանգստանում են, այնպես էլ աշխատում են, տվյալ դեպքում՝ սովորում, ինչպե՞ս է կազմակերպվել սովորողների ամառային հանգստը:**

- Մեր ուշադրության կենտրոնում են եղել երեխաների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքները: Նախարարության ենթակայությամբ ավանդաբար գործող «Ապետ», Ստեփանակերտի հ. 5, 10 դպրոցների, Ծմակահողի դպրոց-ճամբարներում, որտեղ կազմակերպությունների կողմից կազմակերպված, ինչպես նաև ՀՀ տարբեր ճամբարներում կարողացել են իրենց հանգիստն անցկացնել ընդհանուր թվով 3660 աշակերտներ: Համեմատած նախորդ տարիների հետ՝ այս տարի ավելի մեծ թվով երեխաներ են ընդգրկվել ճամբարներում, և հուսով ենք՝ դա դրականորեն կազդի ուսման որակի բարձրացման վրա:

**- Մի քանի խոսք է՝ դասագրքերի, ծրագրերի մասին:**

- Ծրագրային առանձին փոփոխություններ չկան. դասագրքերի մեծ մասը, որ հրատարակվում է Հայաստանում, հիմնականում ստացել ենք, և առաջիկայում կառավարելու դպրոցներ: Այն ամենը, ինչ անհրաժեշտ է նոր ուսումնականը կազմ ու պատրաստ սկսելու համար, ապահովված է: Արցախի կրթական համակարգը Հայաստանի հետ միևնույն կրթական տարածքում է, և բոլոր այն բարեփոխումները, որ իրականացվում են Հայաստանում, նաև մեզ մոտ են ընթանում, և մենք միշտ ակնկալում ենք հայաստանյան մեր գործընկերների աջակցությունը:

ՎԵՐԱՊԱՏՐԱՏՈՒՄԵՐ

ՇԱԽՄԱՏԸ ՕԳՆՈՒՄ Ե ԶԻՇՏ ԲԱՅԼԵՐ ԿԱՏԱՐԵԼ

Օգոստոսի 19-21-ը Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցում անցկացվեցին ԼՂՀ հանրակրթական դպրոցների շախմատի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և սեմինար-պարապմունքներ: Ինչպես տեղեկացանք ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության պետական տեսչության նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության բաժնի վարիչ, շախմատի պետական տեսուչ Բեյբուր Մելքունյանից, ընդգրկվել են հանրապետության դպրոցների բոլոր 217 շախմատի ուսուցիչները: Առաջին փուլին՝ վերապատրաստման դասընթացներին, մասնակցեցին այն ուսուցիչները, ովքեր պետք է քննություն հանձնեին և հավաստագիր ստանային, այսինքն՝ նրանք, ովքեր նոր են սկսել ուսուցանել շախմատ առարկան, ինչպես նաև նրանք, որոնց հավաստագրերի ժամկետը լրացել է: Նշենք, որ հավաստագրերը ՀՀ շախմատի ակադեմիայի և ԼՂՀ ԿԳՄՆ համատեղ որոշմամբ տրվում է 1-3 տարի ժամկետով՝ կախված տվյալ ուսուցչի ստացած գնահատականից:

Դասընթացներն անցկացրին ՀՀ շախմատի ֆեդերացիայի մեթոդիստ, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի սպորտի և շախմատի ամբիոնի դասախոս Սամվել Միսաքյանը, նույն համալսարանի տարիքային և մանկավարժական հոգեբանության ամբիոնի դասախոս, Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի աշխատակից, հոգեբան Անժելա Սարգսյանը, ՖԻԴԵ-ի վարպետ, շախմատի ակադեմիայի նարզիչ, Վանաձորի շախմատի դպրոցի տնօրեն Արշակ Ռամազյանը:

Դասընթացների և սեմինարների նպատակների, շախմատ առարկայի ուսուցման հարցերի շուրջ գրուցեցինք նրանց հետ:

**Սամվել ՄԻՍԱՔՅԱՆ.** - Հայաստանն առաջին երկիրն է, որը հանրակրթական դպրոցներում մտցրել է շախմատ առարկան: Այն նա-

տարին՝ Արցախում, անց են կացվում շախմատի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և սեմինար-պարապմունքներ:

Ուսուցիչներին հիմնականում պարզաբանվում են բարդ թեմաները՝ ինչպես լուծել, ինչպես մատուցել երեխաներին, որ նրանք կարողանան մտածել. չէ՞ որ մտածելու գործընթացը մարդու կյանքում ամենակարևորն է՝ յուրաքանչյուր քայլ կատարելուց առաջ մտածելու: Իսկ շախմատն այն առարկան է, որ օգնում է մարդուն ամեն գործողություն կատարելուց առաջ մտածել: Հենց Արցախի ուսուցիչները վկայում են, որ շախմատ խաղացող երեխաների մոտ մաթեմատիկական կրթությունը շատ ավելի հեշտանում է, նրանք ցանկանում են ինքնուրույն լուծել խնդիրները: Իհարկե, մեզ համար դրանք նորություն չեն: Ես, բազմիցս երեխաների հետ աշխատելով, դրանում համոզվել եմ:

Շախմատը նաև ռազմական արվեստի ուղղություն կարող է հանդիսանալ, որովհետև ժամանակին շախմատ խաղացել են թագավորները, զորավարները, իսկ այսօր այն մեր առօրյան է դարձել: Վստահորեն կարող ենք ասել, որ Հայաստանը դարձել է շախմատային գերտերություն: Վերջերս այդ մասին գիրք գրվեց: Եվ այսպես, շախմատի շնորհիվ մեր երեխաները և ռազմարվեստի, և մտածողության, և շատ այլ դրական որակներով պատրաստ են կյանք մտնելու ճիշտ քայլեր կատարել. լինի դա էքստրեմալ իրավիճակներում, թե հանգիստ կյանքում:

Մեր գլխավոր նպատակը երեխաների մտածողության զարգացումն է: Իսկ բացահայտել շախմատային օժտվածությամբ երեխաներին, ինչպես Հաթերթի երկու հրաշք բալիկներն են՝ Մանուկյան եղբայրները (իրենց տարիքային խմբում ՀՀ առաջնությունում դարձել են չեմպիոն-խմբ.): ուսուցչի սուրբ պարտքն է: Շախմատային օժտվածությամբ երեխաներին պետք է ի հայտ բերել, մեծ հաջողության դեպքում նրանց տեղափոխել մասնագիտացված դպրոց՝ շախմատային բարենպաստ միջավայր, նրանց կրթության տիրապետելու շախմատի լավագույն մասնագետները:

Արցախում, ճիշտ է, մեկ տարի ուշ սկսեցին շախմատ ուսուցանել, բայց այստեղ ու-

սուցիչների վերաբերմունքը շատ է տարբերվում, աշխատանքին նվիրված են: Տեղյակ են, որ երբ շախմատը պաշտոնապես դեռ չէր մտել դպրոց, առանձին ուսուցիչներ շախմատի խմբակ էին պահում (միանշանակ դա ուսուցիչից է գալիս, տնօրենից, միջավայրից):

Ուսուցիչների մեջ զուտ շախմատ առարկայի մասնագետներ չունենք, որ ավարտած լինեն մանկավարժական բուհ, ունենան շախմատի ուսուցչի որակավորում: Մանկավարժական համալսարանում արդեն չորրորդ տարին է, որ շախմատի ուսուցիչներ ենք պատրաստում (աշխատում ենք դասավարդից պատրաստել): Սակայն պիտի ասեն, որ մեր ուսուցիչների մեջ կան բավականին պատրաստված, փորձառու շախմատիստներ, որոնք այսօր իրենց առաքելության կրողներն են և դեռ երկար ժամանակ կկրեն դպրոցում:

Երանի թե բոլոր առարկաներից այսքան տղամարդ ուսուցիչ լիներ դպրոցում: Շախմատի շնորհիվ դպրոցն այսօր նաև այդ առավելությունն է ձեռք բերել: Տղամարդ ուսուցիչներն առանձնապես մեծ առավելություն են կրտսեր դպրոցում, որովհետև գիտենք, որ տղամարդ դասավարդի հազվադեպ կարելի է հանդիպել, երեխային այդ տարիների ընթացքում միայն «մայրիկներն» են դասավանդում, նրանց երկրորդ մայրը: Տղամարդ ուսուցիչը որակական նոր արժեք է տալիս դպրոցին:

Գիտակ ուսուցիչները շատ են, անուններ չտանք, բայց չեն կարող չառանձնացնել Հադրութի շրջանի Ջրակուս գյուղի դպրոցի երիտասարդ ուսուցիչ Բորիս Բալյանին, որը մեզ հիացրեց շախմատային պարտիան մտովի վերարտադրելու ունակությամբ: Մենք ոգևորված ենք ոչ միայն ուսուցիչների ակտիվությամբ: Դասընթացներին մոր հետ եկել էր մարտունեցի դպրոցական Վյաչեսլավ Պետրոսյանը և ակտիվորեն պատասխանում էր մեր հարցերին: Իմացանք, որ լրացրել է երկրորդ կարգը: Ուսուցիչը, եթե դասարանում 3-րդ կարգային է տալիս, մեծ առաջընթաց է:



**Արշակ ՌԱՄԱՅԱՆ.** - Այսօր ամբողջ Եվրոպայում որ տրամաբանություն առարկան տարրական դպրոցում, անցնում է ուզում է շրջադարձ կատարել դեպի շախմատը, և այդ հիմնական գործընթացը դրված է աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովի վրա: Հայաստանից հետո առաջին երկիրը, որը շախմատը մտցրեց դպրոց՝ Մեքսիկան է, 200 հազար դպրոց արդեն անցնում է շախմատ: Ցանկություն են հայտնել Ռուսաստանը, Ռա-

գախաստանը: Մեզանից էլ ծրագրեր են ուզում: ՀՀ շախմատի ակադեմիան վիրտուալ ուսուցման ծրագիր է նախաձեռնել, որն ամենամեծ հեռանկարն ունի, հոկտեմբերից կգործարկվի, կարծում են՝ աշխարհում առաջինն է:

**Անժելա ՍԱՐԳՍՅԱՆ.** - Վերապատրաստման հոգեբանության մասը հիմնականում վերաբերում է նրան, թե ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչներն ինչ



խնդիրների կարող են բախվել: Եվ դրանց հոգեբանական ինչպիսի լուծումներ տալ: Մենք հիմնականում շեշտը դրել ենք գործնական կողմի վրա: Պատկերացնում ենք, որ դասարանում ենք, առաջ է եկել որևէ խնդիր, այդ մասին բարձրաձայնում են իրենք՝ ուսուցիչները: Խնդիրը փորձում ենք լուծել տարբեր տեսանկյուններից: Ամեն մեկն հայտնում է իր կարծիքը, փորձի փոխանակում է լինում, թե ինչպես է իրենցից յուրաքանչյուրը լուծում: Եվ այդպես, քննարկելով լուծման տարբեր եղանակները, գտնում ենք ոսկե միջինը:

Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնը ստեղծվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում՝ մեկ տարի առաջ, շախմատի ակադեմիայում գործող հոգեբանության լաբորատորիայի հիմքի վրա: Նրա խնդիրն է՝ պարզել, թե շախմատ ուսումնական առարկան ինչ ազդեցություն է ունենում երեխաների հոգեբանության զարգացման վրա: Հետազոտությունները ցույց են տվել, որ տրամաբանական մտածողության մեջ հատկապես վերլուծությունը և համադրությունն այն աշակերտների մոտ, ովքեր անցել են շախմատ առարկան, ավելի բարձր մակարդակով են դրսևորվում, նրանց ուշադրության կենտրոնացվածության աստիճանն ավելի բարձր է, այդ երեխաները պրոբլեմային տարբեր խնդիրներ կարողանում են ավելի արագ և հստակ լուծել: Բոլոր տվյալները հրապարակվել են միջազգային հեղինակավոր ամսագրերում: «Անցյալ տարվա հոկտեմբերին Երևանում կայացած Շախմատի միջազգային գիտաժողովում, որին մասնակցում էին 43 երկրներ, բոլորն ուզում էին մեզանից վերցնել մեր փորձն ու ծրագրերը:

Շախմատի ակադեմիայի կողմից հաճախակի դասալսումներ են արվում: Այդ ամենը նկարահանվում և մասնագետների կողմից վերլուծության է ենթարկվում, և հենց վերապատրաստումների ընթացքում դասերը տարածում, փորձի փոխանակում են կատարում:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ



ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՈՒՏՈՆ

ՀԱՂԹԵՑ ՀԱՅԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՈԳԻՆ

Մեզ են գլխից են զարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Հազար դարեր են զարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Եղեռնագարկ էլ եղանք, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:

Յ. ՇԻՐԱԶ

Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում բազմիցս է պաշտպանել իր հավերժելու իրավունքը: Նա բազմիցս ավարայրվել է ու հաստատվել է իր դարավոր իղձերի մեջ միշտ էլ սրբությամբ է փայլախել ու պահել օտարի լծից ազատ հայրենիքը շնացնելու երազանքը:

Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցն իր միջազգային և ազգային միջոցառումներով մի հանգրվան է, որից նահանջել չենք կարող: Նման միջոցառումները ձևավորում են հայրենասիրություն, գեղարվեստական ճաշակ և մարդկային այլ բարձր որակներ և միաժամանակ լցնում են մեր սրտերը հայ ազգի լուսավոր ապագայի հանդեպ անշեղ հավատով:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին էր նվիրված օգոստոսի 18-20-ը անցկացված Աստուծոյի համահայկական չորրորդ մրցույթ-փառատոնը Արցախ աշխարհի մի փոքրիկ ու կախարհիչ անկյունում հայոց հինավուրց Շուշի քաղաքում, որը ժամանակին եղել է խոշոր կրթամշակութային կենտրոն: Փառատոնի հովանավոր-կազմակերպիչն է «Ավան Շուշի պլազա» հյուրանոցը (տնօրեն՝ Սարգիս Գալստյան):

Սփյուռքում ապրող շատ հայրորդներ իրագործում են հայրենամեր բազում մտահղացումներ և ծրագրեր փորձելով բոլոր հնարավոր միջոցներով նպաստել հայապահպանության գործին և մատաղ սերնդի սրտում միշտ վառ ու բորբոք պահել սերը առ հայրենին: Այսպես եղել է միշտ, բայց այս տարի ամեն ինչ շատ ավելի մեծ թափ ու ընդգրկվածություն է ստացել, քանի որ տարին մեր ժողովրդի համար մեծ խորհուրդ ունի և պարտավորեցնող է, ինչ-որ տեղ՝ նաև համախմբող:

Արդեն չորրորդ տարին է, ինչ նման ազգամեր նախաձեռնությամբ են հանդես գալիս փառատոնի հովանավորներ, «Ավան պլազա» ՓԲԸ բաժնետերերի նախագահ Ալեք Բաղդասարյանը և Հայկուշ Քոհիլերը:

Արժե նշել, որ Աստուծոյի համահայկական առաջին մրցույթի մասնակիցները Արցախից, Հայաստանից և Ջավախքից էին, երկրորդ տարում միացան Իրանի Իսլամական Հանրապետությունը և ԱՄՆ-ը, երրորդում՝ Լիբանանը, իսկ չորրորդում ընդգրկված էին ութ երկրների՝ Արցախի, Հայաստանի, Վրաստանի, Իրանի, Լիբանանի, Բելառուսի, Ուկրաինայի և ԱՄՆ-ի ավելի քան 90 դպրոցականներ, ովքեր հանդես եկան երեք տարիքային խմբերում՝ 9-11, 12-14, 15-16 տարեկաններ:

Մրցույթի թեման էր՝ «Եղեռն և վերածնունդ», նպատակը՝ բորբոք պահել սերը հայրենիքի հանդեպ, խրախուսել գեղարվեստական արտահայտիչ ընթերցանության կանոնները պահպանող ասունընդներին:

Բացման խոսքով հանդես եկավ «Ավան պլազա» հյուրանոցի սեփականատեր-բաժնետեր Ալեք Բաղդասարյանը:

Մրցույթին ներկա գտնվող ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Ասրյանը, իր ողջույնի խոսքում կարևորելով ասունընդի ժամը՝ որպես խոսքարվեստի տեսակ, հանդգնում էր հայտնեց, որ այն իր պատմական և գրական-գեղարվեստական բովանդակությամբ մեծ դեր ունի մատաղ սերնդի դաստիարակության գործում: Նա իր երախտագիտությունը հայտնեց հովանավորներին ու կազմակերպիչներին և հաջողություններ մաղթեց ասունընդի մասնակիցներին:

Ներկայացվեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ուղերձը՝ ուղղված մրցույթի մասնակիցներին, որում մասնավորապես ասված է. «Այս տարի ողջ հայությունը միավորվելով՝ մշտնջենական 100-րդ տարելիցը, և մենք նպատակ ունենք հանուն արդարության, հանուն պահանջատիրության՝ հաղթանակին հասնելու, շարունակելու պայքարը մշակույթի»:



թով, լեզվի պահպանությամբ... Փառատոնի կազմակերպումը միավորվելու հիմնալի հնարավորություն է նաև ցույց տալու գրականությանը և ասունընդներին տիրապետելու կարողությունը, շնորհիվ: Լինենք միասնական, ուժեղ, սիրենք մեր հայրենիքը»:

Մրցույթի հանձնախմբի կազմում էին ԵրՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը (զննատուր հանձնախմբի նախագահ), արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանը, հայ գրականության ամբիոնի վարիչ Սամվել Մուրադյանը «Ավան պլազա» հյուրանոցի սեփականատեր Ալեք Բաղդասարյանը, Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի բեմական խոսքի ավագ դասախոս, դերասանուհի Մարինե Մխիթարյանը, դերասան Աղասի Թադևոսյանը, ԼՂՀ ԿԳՄՆ լեզվի տեսչության պետ Արտակ Ղուլյանը, հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը:

Մրցատյանի նախագահ Ա. Ավագյանի՝ ասունընդի զննատման չափանիշներին (համակրանք, ճաշակ, գաղափար, արտասանության վարպետություն, սահունություն, բեմական արվեստ, ստեղծագործության բարդություն և շեշտադրում) ծանոթացնելուց հետո սկսվեց մրցույթը:

Ամեն ազգ հարատևում է իր ոգեղեն ներուժի վերարտադրությամբ՝ ազգային հոգեսնման աղբյուրից ծնունդ առած հավերժաման արժեքներով, ինչն էլ մրցույթի ժամանակ ներկայացրին դպրոցականները՝ ասունընդի ձևով, իսկ ասունընդի կարևոր ու հիմնական նշանակություններից մեկը նրա արտահայտիչ ու ազդեցիկ լինելն է, այն, որ կարողանում է ազդել ենթագիտակցաբար՝ լցնելով ու հարստացնելով դիմացինի հոգին անբացատրելի զգացումներով, այն, որ կարողանում է ձգել և չվանել: Սպասվելիք ակնկալիքներն իրականացան: Դպրոցականները ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ էին պատ-



րաստվել մրցույթին և կարողացան գեղեցիկ ու արտահայտիչ ներկայացնել ստեղծագործությունները: Դահլիճում տիրող ոգեղեն մթնոլորտից հուզված էին բոլորը, ներկաների ու մասնակիցների աչքերում զգացվում էր օրվա «տարվա խորհրդի խոնարհումով ընկալումը, քանզի բոլորը, նշանակություն չունի, թե աշխարհի որ ծագերից են, ունեն պարտքի զգացում մեր անմեղ գոհերի հիշատակի առջև, մեր պատմության ու մշակույթի, մեր նախնիների առջև: Նրանք նույն



են ոգով ու նպատակով: Նրանք իրենց հետ բերել էին ուժ, հաստատականություն, հայերեն բառ ու խոսք, հարգանք ակունքների նկատմամբ: Երկու օր շարունակ ներկաները վայելեցին ութ պետություններից շուրջ իննսուներկու դպրոցա-

կանների գեղեցիկ կատարումները, երկու օր շարունակ դահլիճը հագեցած էր բացառապես հայ խոսքով ու երգով՝ հայրենասիրական ոգով:

Մրցույթը հագեցած էր Շուշիի «Վարանդա» երիտասարդական, մանկապատանեկան երգչախմբերի (դեկավար՝ Ջաքար Քեչիշյան) և ճանաչված երգիչ Տիգրան Սկրտչյանի կատարումներով:

Երրորդ օրը ամփոփվեցին մրցույթի արդյունքները: «Ավան պլազա» բաժնետերերի նախագահ Ա. Բաղդասարյանը, հովանավոր Հ. Քոհիլերը, հյուրանոցի տնօրեն Ս. Գալստյանը ԼՂՀ ԿԳՄՆ պատվոգրեր և արժեքավոր նվերներ հանձ-

նեցին մրցանակային տեղեր զբաղեցրած դպրոցականներին. 1-ին տեղ՝ Սիսիան Ստեփանյան (Իրան), Քնար Հովհաննիսյան (Երևան), Անի Թովմասյան (ԱՄՆ), 2-րդ տեղ՝ Ասարամ Իսրայելյան Ստեփանյան (Իրան), Մինելի Մանուկյան (Իրան), Նարոյ Սաթի Աղամյան (Լիբանան), 3-րդ տեղ՝ Անի Հովսեփյան (Իրան), Սոֆյա Սարգսյան (Գյումրի), Էրիկա Իսայան (Իրան), Օքսաննա Բալայան (Ստեփանյան), Հասմիկ Ջաքարյան Վրաստան, Դավիթ Հարությունյան (Մարտակերտ), Նարոտ Կարապետյան (Երևան), Ալիսա Իշխանյան (Լիբանան), Լիդա Սարուխանյան (Ասկերան), Մելանի Աղանյան (Իրան), Աննա Բաբայան (Ստեփանյան), Իննա Ալեքսանյան (Երևան), Արեն Հովհաննիսյան (Քաշաթաղ), Ավարդ Մադոյան (Վրաստան), Լիլիթ Ավանեսյան (Շուշի), Կասիա Հանեսյան (Լիբանան): Մնացած բոլոր մասնակիցներին ակտիվ մասնակցության համար տրվեցին ԿԳՄՆ պատվոգրեր, իսկ Սիսիան Ստեփանյանը (1-ին տեղ, Իրան), Նարոյ Սաթի Աղամյանը (2-րդ տեղ, Լիբանան) և Անի Թովմասյանը (3-րդ տեղ, ԱՄՆ) պարգևատրվեցին ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրերով և թանկարժեք նվերներով, ընդ որում՝ Սիսիան Ստեփանյանը կատարեց ազգանպաստ քայլ՝ իր նվերը փոխանցելով զոհված ազատամարտիկի ընտանիքին:

Մրցույթը եզրափակվեց Գուրգեն Մելիքյանի, Մարինե Մխիթարյանի և Քաջիկ Հարությունյանի կատարումներով: Շուշիի շրջվարչակազմի դեկավարի անունից շնորհակալական խոսք ասաց շրջանի կրթության բաժնի վարիչ Իրինա Սարգսյանը:

Վերջում մրցույթից դուրս հանդես եկած դպրոցականների խորխտ երգերն ու արտասանությունները համակեցին բոլորին և համոզեցին, որ ցավն ու արհավիրքը չեն կարող ծնկի բերել այն ժողովրդին, ով ապրել է ուզում, ով հիշում է և պահանջում:

Ասունընդներն ու հանդիսականները միաձուլվեցին, դարձան մեկ հայ՝ ուժեղ, հզոր, անդրդվելի, անկոտրում և պահանջատեր: Այս մրցույթը հանընդհանուր նվիրումի տուրք էր և խոնարհում, ոգու կանչ: Մենք տկարանալու իրավունք չունենք: Այս միջոցառումը գոյատևման հույս էր ներշնչում, այստեղ հնչում էր ազգապահպանման գաղափարը, այն պատգամ էր, խրատ ու կոչ: Մրցույթում հաղթեց հայի հաղթական ոգին, հատկություն, որ դարեր ի վեր կրել է հայ ժողովուրդը, որն էլ մեր ազգի ամենամեծ հարստությունն է: Եկեք այնպես անենք, որ արժեքների վերագնահատման մեր ժամանակներում ոսկու փայլից չխուճանա այն:

Էլմիրա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԼՂՀ ԿԳՄՆ նախարարության եւ արտադպրոցական բաժնի գլխավոր մասնագետ

# ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ 2014-15 ՈՒՍԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Ուսուցիչների օգոստոսյան ամենամյա խորհրդաժողովը ամենալավ հնարավորություն է խոսելու նախորդ ուսումնական տարվա ձեռքբերումների ու բացթողումների մասին և քննարկելու հետագա անելիքները:

2014-2015 ուստարում շրջանում գործել են 16 հանրակրթական դպրոցներ, որից 11-ը միջնակարգ դպրոցներ են, իսկ 5-ը՝ հիմնական: Նշված դպրոցներում ընդգրկված են եղել 674 աշակերտներ (նախորդ տարվա 675-ի փոխարեն), որից 110-ը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցում (նախորդ տարվա 133-ի փոխարեն), իսկ մնացած 564-ը՝ գյուղական համայնքների դպրոցներում (նախորդ տարվա 542-ի փոխարեն): Այդ թվում 1-ին դասարան են հաճախել 77 աշակերտ (նախորդ տարվա 73-ի փոխարեն): Շրջանում գործել է 2 մանկապարտեզ՝ եղեգնուտի և Ակնաբերդի համայնքներում: Նշված մանկապարտեզներ են հաճախել 50 երեխաներ: Քարվաճառի միջնակարգ դպրոցին կից գործել է նախադպրոցական խումբ, որտեղ հաճախել է 5 տարեկան 16 երեխա, իսկ Նոր Վերինների միջնակարգ դպրոցին կից գործել է նախադպրոցական խումբ՝ 4-5 տարեկան 15 երեխաների ընդգրկմամբ:

Ուստարվա սկզբում ունեցել են 114 դասարան-կոմպլեկտ, որը պահպանվել է նույնությամբ: Տարվաընթացում ունեցել են 680 աշակերտ, որից 117-ը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցում, 563-ը՝ մնացած համայնքներում: 2015-16 ուստարում, ըստ նախնական ցանցի, շրջանի դպրոցներ են հաճախելու 734 աշակերտներ, այդ թվում՝ 92 առաջին դասարանցի:

Շրջանի դպրոցներում դասավանդել են 234 ուսուցիչներ, այդ թվում՝ տնօրեններ, փոխտնօրեններ, նրանցից 169-ը ունեն բարձրագույն մանկավարժական, 27-ը՝ բերի բարձրագույն, 30-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն, իսկ 8-ը ոչ մասնագետներ են, որոնք տարբեր բուհերի ուսանողներ են և շուտով կհամալրեն մասնագետ ուսուցիչների շարքերը: Այդուհանդերձ, շրջանում դեռևս զգացվում է ուսուցիչների կարիք, հատկապես՝ ռուսաց լեզվի, օտար լեզվի, ֆիզիկայի և մաթեմատիկայի:

Հաշվետու ժամանակահատվածում ևս հնարավորինս հարստացվել է շրջանի հանրակրթական դպրոցների ուսումնամեթոդական բազան, դպրոցները համալրվել են դպրոցական գույքով, համակարգիչներով և տպիչ սարքերով, մասնավորապես՝ Քարվաճառի, Նոր Վերինների, Նոր Բրաջուրի, Նոր Գետաշենի և Եղեգնուտի միջնակարգ դպրոցներում «Հայաստան համախոսական հիմնադրամ»-ի միջոցներով բացվել են համակարգչային դասասենյակներ: ԿԳ նախարարությունից ստացել է շրջանի դպրոցներ ենթառաքել տարբեր դասարանների դասագրքեր, առարկայական պաստառներ, մեթոդական ուղեցույցներ և այլն:

Բոլոր դպրոցներն ապահովվել

են անհրաժեշտ քանակի վառելիքով (մթերվել է 600մ3 վառելիքով): Մի քանի դպրոցներում առկա են եղել հնամաշ վառարաններ, որոնք փոխարինվել են նորերով: Ընդ որում, Նոր Վերինների և Եղեգնուտի միջնակարգ դպրոցների ջեռուցումն իրականացվել է մեր կողմից կաթսայատների միջոցով, իսկ Քարվաճառի միջնակարգ դպրոցի ջեռուցումն իրականացրել է «Սան-Սիթի» ՍՊԸ-ն:

Կատարվել են դպրոցների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ եղած հնարավորությունների չափով: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցական շենքերի մեծ մասը չի համապատասխանում ժամանակակից չափանիշներին և գտնվում է կիսավեր վիճակում, անհրաժեշտ են ավելի մեծ ներդրումներ: Հատկապես շրջանի Ակնաբերդ, Նոր Էրբեջ, Չարեքտար, Դաղիվանք, Նոր Բրաջուր համայնքների դպրոցներն ունեն հիմնամորթման խիստ կարիք, Նոր Մանաշի դպրոցական շենքը կարիք ունի դասասենյակների ավելացման, իսկ Նոր Կարախանի և Նոր Դարաշենի համայնքների համար անհրաժեշտ է կառուցել նոր դպրոցական շենք:

Շրջանի բոլոր դպրոցներում ըստ ժամանակացույցի կազմակերպվել և անցկացվել են տարբեր միջոցառումներ՝ նվիրված տոնական, հոբելյանական և հիշատակի օրերին: Մասնավորապես՝

-սեպտեմբերի 1-ին նշվեց Գիտելիքի, գրի ու դրոշմի տոնը, անցկացվեցին արհուրյան դասեր, -սեպտեմբերի 2-ին շրջանի դպրոցներում անցկացվեցին միջոցառումներ՝ նվիրված ԼՂՀ հռչակման 23-րդ տարեդարձին, ծաղկեպսակների դրվեցին Արցախյան գոյամարտում նահատակվածների շիրիմներին:

-հոկտեմբերի 5-ին շրջանի բոլոր դպրոցներում տեղի են ունեցել միջոցառումներ՝ նվիրված Ուսուցչի օրվան: Շրջանից տասը մանկավարժ մասնակցել է Ստեփանակերտում տեղի ունեցած տոնական այդ միջոցառմանը: Նրանցից Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար Աննա Աբրահամյանը, որը մասնակցել էր «Տարվա լավագույն ուսուցիչ, տարվա լավագույն մանկավարժական փորձ» մրցույթի հանրապետական փուլին, արժանացավ «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչմանը «Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգում:

Դեկտեմբերի 10-ին մեծ շուքով նշվել է ԼՂՀ Սահմանադրության ընդունման օրը և ԼՂՀ անկախության հանրաքվեի 23-րդ տարեդարձը:

Ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ շրջանի դպրոցներում կազմակերպվել են միջոցառումներ և լույս են ընծայվել պատի թերթեր:

Մայիսի 9-ին շրջանի բոլոր դպրոցներում տեղի են ունեցել եռատոնին օրվան նվիրված բազմաբնույթ միջոցառումներ և այլն:

Կազմակերպվել և հոկտեմբերի 15-ին անց ենթ կացրել ինտելեկտուալ խաղ-մրցույթ շրջանի Քարվաճառ, Նոր Վերինների, Նոր Բրաջուր, Նոր Էրբեջ, Ակնաբերդի և Եղեգնուտ համայնքների դպրոցների միջև: Մրցույթի արդյունքներով հաղթող է ճանաչվել Նոր Էրբեջի միջնակարգ դպրոցի թիմը: Շրջվարչակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի հետ համատեղ ինտելեկտուալ խաղ-մրցույթ ենթ կազմակերպել նաև ապրիլի 17-ին՝ նվիրված Արցախյան ազատամարտի հերոս

Շահեն Մեղոյանի հիշատակին, որին մասնակցել են շրջանի Նոր Կարախանի ու Նոր Դարաշենի համայնքական, Դաղիվանքի, Նոր Գետաշենի, Նոր Մանաշիի և Չարեքտարի թիմերը: Հաղթող է ճանաչվել Նոր Մանաշիի հիմնական դպրոցի թիմը:

Հոկտեմբերի 17-ին շրջանի դպրոցների 11-14-տ. և 15-17-տ. աշակերտ միջև անցկացրել ենք սամուցիի մանկապատանեկան մրցույթ-փառատոնի շրջանային փուլը՝ նվիրված հայ մեծանուն գրողներ Հովհաննես Թումանյանին և Ավետիք Իսահակյանին: Հաղթող ճանաչված չորս աշակերտներ նոյեմբերի 25-ին մասնակցել են մրցույթի համապետական փուլին: Նրանցից Քարվաճառի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Մարիամ Տոնյանը զբաղեցրել է երրորդ մրցանակային տեղը:

9-12-րդ դասարանների աշակերտների միջև անց է կացվել շարադրությունների ամենամյա մրցույթ՝ ներդրողական և շրջանային փուլերով: Համեմատաբար լավագույն աշխատանքները ներկայացվել են մրցույթի հանրապետական փուլին:

Աշակերտների գիտելիքների մակարդակն ստուգելու նպատակով՝ Գնահատման և թեստավորման կենտրոնի հրահանգով և ուղարկված քննական առաջադրանքներով շրջանի բոլոր ուսումնական հաստատություններում անց են կացվել տարբեր դասարանների սովորողների արտաքին ընթացիկ գնահատումներ, արդյունքները քննարկվել են կրթության բաժնում, տրվել են համապատասխան հանձնարարականներ: Չնայած արդյունքները գոհացուցիչ չեն եղել, սակայն նկատվում է, որ ավելի օբյեկտիվ և հետևողական մոտեցում է ցուցաբերվում:

2015թ. հունվարի 20-31-ը շրջանի հանրակրթական դպրոցներում անցկացվեց դպրոցականների առարկայական օլիմպիադայի ներդրողական փուլը, որի արդյունքներով փետրվարի 11-14-ն անցկացված շրջանային փուլին մասնակցեցին շրջանի 15 դպրոցների (նախորդ տարվա 13-ի փոխարեն) 72 աշակերտներ (նախորդ տարվա 70-ի դիմաց): Նրանցից 17-ը (նախորդ տարվա 14-ի փոխարեն) իրավունք ստացան մասնակցելու օլիմպիադայի համապետական փուլին: Նշված 17 աշակերտներից 3-ը արժանացել են ԿԳ գովասանագրերի (2-ը՝ ՆԶՊ առարկայից-Չարեքտարի մ/դ, 1-ը՝ ռուսաց լեզվից-Ակնաբերդի մ/դ): Սակայն սա մեզ չի գոհացրում, քանի որ մեր շրջանի դպրոցականները վերջին երկու տարում օլիմպիադայում մրցանակային տեղ էին զբաղեցնում, և պետք է ձգտեցնեք անել էլ ավելին՝ ուսումնական գործընթացն ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, ուսուցման ժամանակակից մեթոդներին ծանոթացնելու և ուսուցիչների կրթական մակարդակը կատարելագործելու նպատակով՝ ԿԳ-ի կողմից պարբերաբար կազմակերպվում են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, սեմինար-պարապմունքներ և այլն, որոնց մասնակցում են նաև մեր շրջանի մանկավարժները: Այս տարվա մարտի 14-23-ը 29 ուսուցիչներ մասնակցել են Ստեփանակերտում կազմակերպված վերապատրաստման դասընթացին՝ տարբեր առարկաների գծով: 2012թ. մեր շրջանից վերապատրաստվել և առեստավորվել էին 38 ուսուցիչներ, 2013թ.՝ 33, 2014ին՝ 36 ուսուցիչներ:

Հոկտեմբերի 15-17-ը ԿԳ կրթության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգման են ենթարկվել Նոր Կարախանի և Քնարավանի հիմնական դպրոցները: Նշված դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակաժողովը գնահատվել է բավարար:

Կրթության բաժնի կողմից ևս դպրոցներում կատարվել են ընթացիկ ստուգումներ և շրջայցեր, որոնց ընթացքում ի հայտ եկած թերությունների ու բացթողումների վերաբերյալ արվել են դիտողություններ, տրվել են ցուցումներ՝ դրանք վերացնելու համար, ցուցաբերվել է մեթոդական օգնություն: Ստուգումները ցույց են տվել, որ այն դպրոցներում, որտեղ սահմանված կարգով տնօրինության կողմից կատարվել են դասալուսման անհամեմատ բարձր է: Ուստի պետք է ուժեղացնել վերահսկողությունը, կազմակերպել սկսնակ ուսուցիչների ստաժավորումը և հատկապես մեծ ուշադրություն դարձնել կարգապահական հարցերին: Այս առումով նշենք, որ դասալուսման մատչանքների ստուգումը ցույց տվեց, որ այս տարի, նախորդ տարվա հետ համեմատած, բավականին առաջընթաց կա և որակական, և քանակական առումներով: Ուստի պետք է էլ ավելի մեծ ուշադրություն էլ հետևողականությունը դրսևորել՝ ներդրողական վերահսկողության մակարդակն ամուր հիմքերի վրա դնելու համար:

Ուսման որակի բարձրացման են միտված նաև այն բազմաբնույթ միջոցառումները, փոխադարձ դասալուսմանը, մրցույթներն ու բաց դասերը, որոնք կազմակերպվում և անցկացվում են մեր դպրոցներում: Սակայն, հաշվի առնելով ներկայումս կրթության ոլորտում տեղի ունեցող արագ զարգացումները, կատարածով չպետք է բավարարվենք, այլ պետք է կարողանանք քայլել ժամանակին համահունչ:

Գնահատման և թեստավորման կենտրոնից ստացել և շրջանի դպրոցներին ենք տրամադրել 9-րդ և 12-րդ դասարանների քննությունների անցկացման համար անհրաժեշտ արձանագրությունների և այլ բլանկներ: Դպրոցների և կրթության բաժնի կողմից կատարվել են նախապատրաստական բոլոր աշխատանքներ՝ կապված քննական կենտրոնների ձևավորման, քննության ընթացքի կազմակերպիչների նշանակման և այլնի հետ: Քննությունների առաջին փուլում անց է կացվել հունիսի 1-ից մինչև հունիսի 22-ը: Լրացուցիչ քննություններն անց են կացվել հուլիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածում՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

Շրջանում ունենք 9-րդ դասարանն ավարտած 43, իսկ 12-րդ դասարանն ավարտած՝ 36 աշակերտներ, որոնք քննություններ են հանձնել «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Բնագիտություն», «Հայոց պատմություն», «Օտար լեզու» և «Ֆիզիկոլոգիա» առարկաներից: Ընդ որում՝ 9-րդ դասարանի «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա» առարկաների քննությունները նրանք հանձնել են նախապես ձևավորված քննական կենտրոններում՝

1. Քարվաճառի, որի մեջ ընդգրկված են եղել Քարվաճառի, Նոր Վերինների, Նոր Բրաջուրի միջնակարգ, Նոր Մանաշիի և Ծարի հիմնական դպրոցները,
2. Ակնաբերդի՝ Ակնաբերդի միջնակարգ դպրոցը,

3. Եղեգնուտի, որի մեջ ընդգրկված են եղել Դաղիվանքի, Չարեքտարի, Նոր Դարաշենի, Նոր Էրբեջի, Չուրու միջնակարգ և Քնարավանի հիմնական դպրոցները:

9-րդ դասարանի մնացած քննությունները և 12-րդ դասարանի բոլոր քննություններն աշակերտները հանձնել են իրենց դպրոցներում, որոնց տրամադրվել են ԳԳԿ-ից ստացած անհրաժեշտ արձանագրությունների և այլ բլանկներ: 12-րդ դասարանի 8 շրջանավարտներ մասնակցել են միասնական քննություններին: Նրանցից 5-ը հաջողությամբ հանձնել է և ընդունվել տարբեր բուհեր, մի քանիսն էլ հավակնել են կրթությունը շարունակել հեռակա ուսուցմամբ:

Քննություններին մասնակցած շրջանի հանրակրթական դպրոցների 12-րդ դասարանի «անբավարար» գնահատված 2 աշակերտներ հանձնել են իրենց վերաքննությունները, իսկ 9-րդ դասարանի «անբավարար» գնահատված 6 աշակերտներ վերաքննություններ կհանձնեն օգոստոսի 20-30-ը:

Անդրադառնալով 2014-2015 ուստարում աշակերտների ցուցաբերած առաջադիմությանը՝ նշենք, որ տարեվերջյան հաշվետվությանը շրջանում ունենք 680 աշակերտներ, որից 73-ը՝ 1-ին դասարանն ավարտածներ, մնացած 607-ից ունենք 73 գերազանց սովորող աշակերտ (նախորդ տարվա 70-ի դիմաց), 2 չգնահատված աշակերտ, ունենք նաև «անբավարար» գնահատված 10 աշակերտ, 154-ը՝ լավ, իսկ 368-ը միջակա կողողությունների տեղի են: Ընդհանուր առմամբ ուսման առաջադիմությունն ամբողջ շրջանում կազմում է 98 տոկոս, որակը՝ 38, գերազանցիկներ՝ 12:

Սակայն ստուգումներից պարզ է դառնում, որ այս գնահատականները ոչ միշտ են արտացոլում իրական պատկերը, և այս առումով բոլորս պետք է օբյեկտիվության ձգտենք՝ խուսափելով աշակերտներին անհամեմատ բարձր գնահատականներ բաշխելուց:

Ուսման որակի բարձրացման համար դպրոցներում պետք է էլ ավելի ուժեղացնել ներդրողական վերահսկողությունը, պետք է ամենօրյա համակարգված աշխատանք տանել, հատկապես ամրացնել դպրոց-ընտանիք կապը, առավել մեծ ուշադրություն դարձնել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին, քանզի մեծ թվով բացակայություններ և ոչ բավարար գիտելիքներ ունեն հիմնականում նշված երեխաները: Անհրաժեշտության դեպքում բացատրական աշխատանքներ տանել նաև այնպիսի ծնողների շրջանում, որոնք հետևողական չեն իրենց երեխաների ուսման հարցում:

Վերջում ուզում են շնորհավորել բոլորիս նոր ուսումնական տարվա կապակցությամբ, ցանկանալ առողջություն, խաղաղություն, հաջողություններ կյանքում և աշխատանքում, նորանոր բարձունքների հաղթահարում և բեղմնավոր աշխատանք՝ ի շահ մեր պետության հզորացման ու բարգավաճման, հանուն որի պետք է բոլորս ջանք ու եռանդ չխնայենք մեր առջև դրված խնդիրները պատվով կատարելու, ուսման որակն էլ ավելի բարձրացնելու և մանկավարժի բարի անունն ու հանրավեր պար պահելու համար:

**Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**  
**ԼՂՀ Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ**

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՇՈՒՆԻ ԵՐԶԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2014-2015 ՈՒՍԱՐՎԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Այսօր մարդկությանը հուզող հարցը համաշխարհային տնտեսական ճգնաժամը հաղթահարելն ու զարգացում ապահովելն է: Եվ այդ հարցի լուծման հիմնական ուղին կրթությանն է...

Հաշվետու ժամանակահատվածում շրջանում գործել են 1 ավագ, 4 միջնակարգ և 3 հիմնական դպրոցներ, որտեղ ընդգրկված են եղել 705 աշակերտ՝ 57 դասարան-կոմպլեքսներում: Նախորդ ուսումնական տարվա համեմատ՝ աշակերտների թիվը ավելացել է 24-ով, հիմնականում՝ Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում:

Շրջանի ութ դպրոցներում դասավանդել են 135 ուսուցիչներ, որից 120-ը՝ բարձրագույն, 15-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ: Շուշուում գործում են նաև Դանիել Դազարյանի անվան մասնագիտացված երաժշտական դպրոցը՝ 11 դասարանով, 130 աշակերտների ընդգրկմամբ...

Տարեվերջին մեկից վեց տարեկան երեխաների և 1-6-րդ դասարանների աշակերտների համար Ամանորի նվերներ են ստացել 49 նախարարությունից և բաժանվել 7-12-րդ դասարանների աշակերտներին նվերներ են բաժանվել շրջվարչակազմի ղեկավարի կողմից: Բոլոր դպրոցներում կազմակերպվել և անց են կացվել Ամանորի միջոցառումներ: Շրջվարչակազմի ղեկավարի կողմից Ամանորի տոնահանդես է կազմակերպվել Շուշուի 1-6 տարեկան երեխաների համար, որտեղ էլ բաժանվել են 49և նվերները:

2014-15 ուստարին տարեվերջի աշակերտների շարքի հաշվետվությունների համաձայն՝ 20 աշակերտ մնացել է վերաքննության, 11-ը մնացել է դասընթացը կրկնելու նույն դասարանում: Նախորդ տարին վերաքննության էին մնացել 20 աշակերտ, նույն դասարանում՝ 2 աշակերտ: Ինչպես տեսնում ենք, ավելացել է նույն դասարանում մնացած աշակերտների թիվը, որն ավելի ռեալ գնահատման արդյունք է: Ընդունվել են դպրոցներ 17 աշակերտներ, դուրս են եկել 24-ը: Դուրս եկողների հիմնական պատճառը շրջանից դուրս այլ բնակության վայր տեղափոխվելն է:

2014-2015 ուստարին սկսվեց՝ հենվելով նախորդ ուսումնական տարվա հաջողությունների վրա և հաշվի առնելով բացթողումներն ու թերությունները: Սեպտեմբերին բոլոր դպրոցներում կատարվել են դասարանների կոմպլեքսավորման և ճորտ ուսումնական տարվա անելիքների պլանավորման աշխատանքներ:

Գյուղական բնակավայրերի դպրոցները բարձրագույն կրթությամբ մասնագետներով համալրելու նպատակով հայտարարվել և անց են կացվել մրցույթներ: Քարին տակի միջնակարգ դպրոցում անց են կացվել մրցույթներ ռուսաց լեզու և աշխարհագրություն առարկաներից, Լիսագո-

րի միջնակարգ դպրոցում՝ անգլերենից: Մրցույթներում հաղթող ճանաչվածները ընդունվել են աշխատանքի: Ներկա դրությամբ էլի հայտարարված են մրցույթներ՝ գյուղական դպրոցների ուսուցիչների փոփոխության համար, որոնք չեն համալրվել նախորդ տարիներին: Դրանք են՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, պատմություն, աշխարհագրություն:

Շրջանում ամեն տարի հանդիսավոր նշվում է Ուսուցչի օրը: Անցած տարի էլ շրջվարչակազմի ղեկավարի գլխավորությամբ կազմակերպվել և հանդիսավոր նշվել է այդ տոնը:

Չմռան նախապատրաստական աշխատանքներ են կատարվել շրջանի բոլոր հանրակրթական դպրոցներում: Չորս կրթօջախներ ջեռուցվել են զազով: Մուրացանի անվան ավագ Քարին տակի, Լիսագորի և Եղծառի միջնակարգ դպրոցներ: Խ. Աբովյանի անվան, Դ. Դազարյանի անվան և Հին շենի դպրոցները ջեռուցվել են ճորտ համակարգով: Շատ վատ է ջեռուցվել Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցը, հատկապես՝ սկսած հունվար ամսից: Լավագույն դեպքում ջերմաստիճանը եղել է 15 աստիճան... այն է՝ ոչ բոլոր դասասենյակներում, որը բացասական է անդրադարձել լիարժեք դասապրոցեսի կազմակերպման վրա: Վատ ջեռուցման հիմնական պատճառը ջերմամատակարարի անբարեխիղճ և անպատասխանատու վերաբերմունքն է եղել, որին չեն ազդել բազմակի բողոքներն ու խնդրանքները: Եկող տարվա համար պայմանագիր կկնքվի իր պարտականությունները պարտաճանաչ և բարեխիղճ կատարող ընկերության հետ: Փայտով ջեռուցվող գյուղական վայրերի 2 դպրոցների համար ժամանակին մեքերվել է անհրաժեշտ քանակությամբ վառելիքայտ:

Տարեվերջին մեկից վեց տարեկան երեխաների և 1-6-րդ դասարանների աշակերտների համար Ամանորի նվերներ են ստացել 49 նախարարությունից և բաժանվել 7-12-րդ դասարանների աշակերտներին նվերներ են բաժանվել շրջվարչակազմի ղեկավարի կողմից: Բոլոր դպրոցներում կազմակերպվել և անց են կացվել Ամանորի միջոցառումներ: Շրջվարչակազմի ղեկավարի կողմից Ամանորի տոնահանդես է կազմակերպվել Շուշուի 1-6 տարեկան երեխաների համար, որտեղ էլ բաժանվել են 49և նվերները:

2015թ. հունվարից դպրոցները գործում են ՊՈԱԿ-ի կարգավիճակով: Շրջանի համարյա բոլոր դպրոցներում գործում են համակարգչային կաբինետներ: Բացի Քիրսավանի հիմնական դպրոցից՝ բոլոր դպրոցները միացված են «dasaran.am» ցանցին: Մուրացանի անվան ավագ դպրոցից բացի՝ մնացած դպրոցները միացել են ծրագրին հունվարից հետո, և պետք է նշել, որ այդ գործում կան դեռևս թերացումներ, որոնք անհրաժեշտ է վերացնել նոր ուսումնականում: Տարվա ընթացքում բոլորիս հուզող հիմնական հարցերից մեկը եղել է ուսման որակի բարձրացումը: 2014-15 ուստարին դպրոցները եզրափակել են 96,7% առաջադիմությամբ, 36,2 % որակով (նախորդ տարվա 99,6 և 32,2%-ի դիմաց): Իհարկե, ուսման որակի բարձրացման հարցը միշտ էլ կարևորագույն խնդիրներից մեկն է եղել: Այսօր, ինչպես նախկինում, շրջանի դպրոցներում «սոցիալական հարցեր» չեն լուծվում. աշխատանքի են ընդունվում և հնարավորինս առավել ժամաքանակով ապահովվում են իրենց մասնագիտությանը տիրապետող ուսուցիչներ, որը պիտի տա իր դրական արդյունքները: Միայն իր առարկային տիրապետող, ճոր մեթոդներով զինված և իր աշխատանքին նվիրված ուսուցիչը կարող է իր աշակերտի մեջ սեր առաջացնել դեպի ուսումը և դեպի իր առարկան: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իր առջև

նպատակ դնի դասավանդել այնպես, որ իր աշակերտը գերազանցի իրեն: Միայն այդ դեպքում ուսուցիչը կլինի իր բարձրության վրա: Գաղտնիք չէ, որ այսօրվա աշակերտը ավելի շատ է տեղեկացված, և նրա պահանջների շրջանակը ավելի լայն է: Ուրեմն, ուսուցչի առջև այսօր ավելի բարդ խնդիր է դրված, քան երբևէ: Անհրաժեշտ է խստացնել պահանջկոտությունը և ավելի բարեխիղճորեն վերաբերվել վստահված աշխատանքին. միայն այդ դեպքում կունենանք ցանկալի արդյունքներ:

Բաժնի կողմից վերահսկվում են դպրոցներում իրականացվող աշխատանքները: Քանի որ մեծ չէ շրջանի դպրոցների թիվը, տարվա ընթացքում բաժնի աշխատողները 3-4 անգամ այցելություններ են կատարել գյուղական վայրերի դպրոցներ՝ տեղերում քննարկելու տարբեր հարցեր:

Շրջանի բոլոր դպրոցներում գործել են առարկայական մեթոդավորումներ, որոնք աջակցել են դասաբաշխմանը և ուսումնադաստիարակական աշխատանքների բարելավմանը: Մեթոդիավորումների կողմից կազմակերպվել են բաց դասեր, դասմիջոցառումներ, մանկավարժական ընթերցումներ, լույս ընծայվել պատի թերթեր: Քարինտակի միջնակարգ և Հինշենի հիմնական դպրոցներում անց են կացվել մեթոդիավորման փնջային նիստեր, որտեղ կազմակերպվել են բաց դասեր, լսվել գեկուցումներ: Մանկավարժական ինքնակրթության և լավագույն փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են մանկավարժական ընթերցումներ և մանկավարժական գեկուցումներ:

49 նախարարության կողմից ստուգվել է դպրոցների տնօրենների և փոխտնօրենների կողմից կատարված դասալուծումների քանակն ու որակը: Դասալուծումները հիմնականում համապատասխանում են պահանջվող քանակին և որակին: Բոլոր տնօրենները դասալուծումները գնահատվել են «լավ»: Իհարկե, դա չի նշանակում, որ տնօրենները անելիքներ չունեն, կամ բոլոր լսված դասաժամերը եղել են համապատասխան մակարդակի վրա: Տարվա ընթացքում ապահովվել է շրջանի ուսուցիչների մասնակցությունը նախարարության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Ժամանակին ճշտվել և ԳՊԿ են ներկայացվել միասնական, պետական ավարտական և ավարտական քննություններին մասնակցող աշակերտների ցուցակները:

ԳՊԿ-ի կողմից շրջանի դպրոցների տարբեր դասարաններում անց է կացվել արտաքին ընթացիկ գնահատում տարբեր առարկաներից: Նոյեմբեր ամսին արտաքին ընթացիկ գնահատման ընդգրկվել է 251 աշակերտ, ապրիլին՝ 179:

Բոլոր դպրոցներում տնօրինության կողմից նույնպես տրվել են ստուգողական աշխատանքներ, որոնց արդյունքները վերլուծվել են, տրվել գնահատականներ, ստուգվել առանձին առարկաների դրվածքը:

Տարվա ընթացքում 49 նախարարության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել Մուրացանի անվան ավագ և Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցներում: Ստուգումների արդյունքում դպրոցների աշխատանքները գնահատվել են բավարար: Հունվարին կազմակերպվել է առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլը, փետրվարին՝ շրջանային փուլը, որին մասնակցել է 103 աշակերտ: Շրջանի գյուղական վայրերի դպրոցների աշակերտները նույնպես ակտիվորեն մասնակցել են օլիմպիադայի շրջանային փուլին, ինչը չի կարելի ասել հանրապետական փուլի մասին: Հաղթող ճանաչված 15 աշակերտ մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին, որտեղ

Մուրացանի անվան ավագ դպրոցի մեկ աշակերտ և Դ. Դազարյանի անվան միջնակարգ դպրոցի երկու աշակերտ պարգևատրվել են ակտիվ մասնակցության համար: Դ. Դազարյանի անվան միջնակարգ դպրոցի մեկ աշակերտ հայոց պատմությունից մասնակցել է նաև ՀՀ-ում անցկացված օլիմպիադային:

Շրջանում կազմակերպվել և անց է կացվել «Կենդուրու» միջազգային մաթեմատիկական խաղ-մրցույթը, որտեղ Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի 4-րդ դասարանի աշակերտուհի Նարինե Առստամյանը արժանացել է հատուկ մրցանակի:

Շրջանի դպրոցների աշակերտները ակտիվ մասնակցություն են ունեցել ստեղծագործական շարադրությունների և ասմունքի տարբեր մրցույթների հանրապետական փուլերին: Ռուսերենից կազմակերպված ասմունքի մրցույթում Մուրացանի անվան ավագ դպրոցի խումբը գրավել է 3-րդ տեղը: «Հայ ասպետ» ինտելեկտուալ և գեղարվեստական մրցույթի հանրապետական փուլում Մուրացանի անվան ավագ դպրոցի թիմը պարգևատրվել է պատվոգրով՝ ակտիվ մասնակցության և «Լավագույն պարող» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար, իսկ նույն մրցույթում Լիլիթ Ավանեսյանը հաղթող է ճանաչվել «Լավագույն ասմունքող» անվանակարգում՝ պարգևատրվելով «Մայրական երախտագիտություն» մեդալով: Ազգագրական պարի մրցույթ-փառատոնին նույն դպրոցի խումբը գրավել է 2-րդ պատվավոր տեղը: Մուրացանի անվան ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Ավանեսյանը խրախուսվել է ՀՀ վարչապետ Հովիթ Աբրահամյանի շնորհակալագրով՝ Ասմունքի մանկապատանեկան 7-րդ մրցույթ-փառատոնին «Գրան պրի» մրցանակին արժանանալու համար: Դ. Դազարյանի անվան դպրոցի կլարնետի 6-րդ դասարանի աշակերտ Սարգիս Սարգսյանը մասնակցել է Արցախի ժողգործիքների պատանի կատարողների մրցույթին և շվի կատարման համար արժանացել 2-րդ մրցանակի: Նույն դպրոցի երաժշտական բաժնի կոլեկտիվը դասարանի աշակերտների ուժերով հանրապետությունում առաջին անգամ ներկայացվել է մանկական օպերա, որը ցուցադրվել է նաև Հաղթող շրջկենտրոնում և արժանացել հանդիսատեսի գոհունակությանն ու գովասանքին: Ասմունքի համահայկական 4-րդ փառատոնին շրջանից մասնակցած չորս աշակերտներից երեքը (Խ. Աբովյանի անվան հ/դ) պարգևատրվել են ակտիվ մասնակցության համար, մեկը (Մուրացանի անվան ա/դ) 3-րդ տեղ գրավելու համար:

Բարձր մակարդակի վրա է գտնվում արտադասարանական աշխատանքների կազմակերպման դրվածքը շրջանի բոլոր դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում: Բոլոր դպրոցներում գործում է «Չարթոն» մանկապատանեկան կազմակերպությունը: Բոլոր դպրոցները աշխատանքները սկսում են առավելագույն մարմնամարզությամբ, իսկ երկուշաբթի օրը՝ ԼՂՀ, որոշ դպրոցներում նաև ՀՀ հիմների հնչեցմամբ:

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Արցախյան շարժման հերոսների հիշատակին, տոն և հիշատակի օրերին: Բազմաբնույթ միջոցառումներ են կազմակերպվել՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Շրջանի աշակերտները մասնակցել են «Հիշում են և պահանջում» խորագրով քաղաքային երթին: Դպրոցների աշակերտները և ՄՊԱԿ սաները ակտիվ մասնակցում են շրջանային և հանրապետական միջոցառումներին: Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները իրենց աշխատանքներով ակտիվ մասնակցություն են ունենում հանրապետական ցուցահանդեսներին և փա-

ռատներին: Կենտրոնի թատերական խումբը «Արցախի բառ ու բան»-ով մասնակցել է «Ժենգայով հացի» փառատոնին և «Խնեցու տոնին», որի համար շրջվարչակազմի ղեկավարի կարգադրությամբ արժանացել է դրամական պարգևի: Կենտրոնի տարվա հատկանշական ձեռքբերումն այն է, որ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից անցկացվող «Համայնքները մշակութային խաչներուկում» մրցույթ-փառատոնին այս տարի մասնակցել է 4 անվանակարգով և նվաճել առաջին հորիզոնականը՝ «Լավագույն խմբային պար» և «Արցախի բառ ու բան» անվանակարգերում: Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի աշխատանքային կոլեկտիվի գործունեությունն ուղղված է երեխաների մեջ մանկուց ձևավորելու ազգային և գեղագիտական ծաշակ, ինչպես նաև՝ սեր դեպի արվեստն ու արիեստը: 2014թ. դեկտեմբերին ԿԳ նախարարության կողմից համակողմանի ստուգումներ են անցկացվել կենտրոնում, որի արդյունքում աշխատանքները գնահատվել են բավարար:

Դպրոցներում մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվում ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությունը: Ըստ նախորդ հաստատված կարգացուցակների՝ դպրոցների աշակերտները հանդիպումներ են ունեցել իրենց կցված գործատեսի հետ, ծանոթացել զինվորական կյանքին ու կենցաղին: Շրջանի զինղեկները պարտադիր մասնակցություն են ունեցել ԿԳՆ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Հովտեմբերին Մուրացանի անվան ավագ դպրոցի թիմը մասնակցել է հրաձգության հանրապետական փուլին և գրավել 2-րդ տեղը: Ապրիլ ամսին անց է կացվել «Լրժովիկ» ռազմաանոթական խաղերի շրջանային փուլը, որտեղ հաղթող ճանաչված Քարինտակի միջնակարգ դպրոցի թիմը մասնակցել է հանրապետական փուլին և գրավել 4-րդ տեղը, սակայն «Հրաձգություն» մրցաձևում թիմը գրավել է 1-ին տեղը: Անհատական մրցանակներ է ստացել թիմի անդամների մեծ մասը: Լավագույն ջոկի հրամանատար է ճանաչվել Ախարոն Առստամյանը, լավագույն հրաձիգ՝ Շուշան Բաղդյանը, լավագույն ինքնաձիգ՝ քանդող և հավաքող Հակոբ Հակոբյանը:

Շրջանի մարզական թիմերը նույնպես իրենց մասնակցությունն են ունեցել հանրապետական բոլոր մրցումներին: Վոլեյբոլի պատանիների թիմը հանրապետական առաջնությունում գրավել է 2-րդ տեղը, բասկետբոլի թիմը՝ 1-ին: Թեթև աթլետիկայի անհատական մրցումներում՝ մեկ 1-ին և մեկ 2-րդ տեղ: Շախմատի օլիմպիադայում Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի թիմը գրավել է 2-րդ տեղը, իսկ երեք աշակերտ շրջանից մասնակցել է ՀՀ շախմատի առաջնության կիսաեզրափակիչ փուլին:

Մայիսի 24-ին բոլոր դպրոցներում հանդիսավոր անց է կացվել Վերջին զանգի արարողությունը: Շրջանավարտների արժեքավոր նվերներով շնորհակալվել է «Ավան պալատ» հյուրանոցի տնօրինությունը, իսկ շրջվարչակազմի ղեկավարի կողմից շրջանավարտների համար կազմակերպվել է ուրախ երեկո:


Հունիս ամսում դպրոցներում 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտները քննություններ են հանձնել 4-րդում՝ երկու, 9-րդ և 12-րդում՝ վեց առարկաներից: Բացի 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» առարկաներից, որոնք քննությունները կազմակերպվել են կենտրոնացված՝ Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի բնական կենտրոնում, մնացած բոլոր քննություններն անց են կացվել և ստուգվել դպրոցներում: Ավարտական քննություններ է հանձնել 56 աշակերտ, որից 12-ը՝ մաթեմատիկայից, 5-ը՝





ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂԱՎ

2014-2015 ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ՆՈՐ՝



ԼՂԳ պետականության ամրապնդումը...

ԼՂԳ պետականության ամրապնդումը և 21-րդ դարի նրա անկասելի ընթացքը պայմանավորված են մի շարք գործոններով, որոնցից ամենակարևորը դպրոցն է՝ նրա առաջընթաց զարգացմանն ու հետագա կատարելագործմանն ուղղված համալիր միջոցառումների կենսագործումը: Այսօր ազգային դպրոցն արմատական բարելավման անցումային փուլում է, ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության գործը որակական նոր մակարդակի բարձրացմանը դարձել է կենսական անհրաժեշտություն: Դպրոցի առջև ծառայած ներկայիս խնդիրները ի վիճակի կլինի բարձր մակարդակով լուծելու միայն հիմնավոր մանկավարժական կրթություն ունեցող, իր մասնագիտությանը գերազանց տիրապետող, ստեղծագործական խառնվածքի տեր ուսուցիչը:

«Ուսուցչի պաշտոնը արևի տակ ամենաբարձր պաշտոնն է»: Ն.Ս. 3.Ա.Կոնենսկին, ուսուցիչներին նմանեցնում է արեգակին, որն իր ճառագայթները տարածում է բոլորի վրա: «Ուսուցչի շուրթերը ակունք են, որտեղից դեպի աշակերտներն են հոսում գիտության վտակները»: Ռ. Պերպերյանը կարծում է, որ ժողովրդի մշակութային մակարդակը չափվում է այն պատվանդանի բարձրությամբ, որի վրա դրված է ուսուցչի աթոռը: Հասարակության կողմից ուսուցչի նկատմամբ պետք է, որ ցուցաբերվի մեծ հարգանք և ուշադրություն, իսկ պետության կողմից՝ նյութական և բարոյահոգեբանական աջակցություն: Պետք է նկատի առնել, որ ժամանակի հետ փոխվում են կրթական համակարգի նկատմամբ հասարակության պահանջները: Այսօր բավարար չէ յուրաքանչյուր երեխայի միայն դպրոց հաճախելն ապահովելը: Ներկա հասարակություններն պետությունից և կրթական համակարգից պահանջում են, որ յուրաքանչյուր երեխա դառնա կրողը որոշակի կրթական մակարդակի: Կարևորվում է ոչ միայն երեխայի կրթություն ստանալը, այլև ինչպիսի կրթություն ստանալու հարցը: Յուրաքանչյուր երեխայի որակյալ կրթություն ստանալու օրենսդրական պահանջը մնում է օրակարգային: Կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները պայմանավորված են հասարակական-սոցիալական փոփոխություններով: Ավանդական ուսուցմանը փոխարինելու ելանքն անձնային, աշակերտակենտրոն զարգացման և կողմնորոշիչ ուսուցման ձևերն ու մեթոդները: Ուսուցիչը աշակերտին պետք է մասնակից դարձնի որոշումների կայացման գործընթացին, հաշվի առնի երեխաների կարծիքը, խրախուսի նրանց ինքնուրույն դատողությունները, ուշադրություն դարձնի ոչ միայն առաջադիմությանը, այլև անձնային որակներին:

Նման մոտեցման դեպքում ուսուցիչ-աշակերտ հարաբերություններն ունեն աշակերտակենտրոն ուղղվածություն, հաշվի են առնվում աշակերտի մասնագիտություններն ու հետաքրքրությունները, անձն ու տարիքային առանձնահատկությունները: Այդպիսի մոտեցման արդյունքում երեխայի զարգացման մեջ տեղի է ունենում դանդաղ, բայց անընդհատ պրոգրեսիվ

աճ: Ժամանակակից դպրոցի նպատակը պետք է լինի այնպիսի պայմանների ապահովումը, որ յուրաքանչյուր սովորող դառնա բարձր ինքնագիտակցությամբ և առավելագույնս ինքնիրացված անձնավորություն: Ուսուցիչը պետք է լինի այն մարդը, ում գործունեության կարևոր նպատակներից մեկը սովորողների ներքին հնարավորությունների բացահայտումն ու նրանց անհատականության զարգացումն է: Այսօրվա ուսուցիչը չի կարող սոսկ դասատու լինել, նա պետք է լինի աճող սերնդի համակողմանի զարգացման հմուտ կառավարողը, ապագա բաղաբացու անձի ձևավորողը: Ուսուցիչը պետք է ունենա խոր գիտելիքներ, վառ երևակայություն, վերլուծելու և ընդհանրացնելու կարողություն, երեխայի ներաշխարհը թափանցելու և ճանաչելու ընդունակություն:

Ուսումնական տարում շրջանում գործել են 16 միջնակարգ և 9 հիմնական դպրոցներ: Ունեցել ենք 6 մասնաճյուղեր՝ կցված միջնակարգ և հիմնական դպրոցներին: Շրջանի դպրոցներում ուսումնական տարվա սկզբին եղել է 1939 դպրոցական, իսկ ուսումնական տարում ավարտել են 1934-ը, ընդունվել է 30, դուրս եկել՝ 35 աշակերտ: Միջնակարգ կրթության ատեստատ է ստացել 150 շրջանավարտ, իսկ հիմնական կրթության վկայական՝ 108:

Շրջանում գործել են 2 արտադպրոցական հիմնարկներ՝ «Հաղորդի մանկական ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ՝ 320 երեխաների ընդգրկմամբ, 25 խմբակ և «Հաղորդի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ՝ 257 պատանիների ու աղջիկների ընդգրկմամբ, 20 խմբակ: Հաղորդի երկու՝ Տունու և Թաղաեռի միջնակարգ դպրոցներում ունեցել ենք մեկական մախարադպրոցական խմբեր:

Պետական մանկապարտեզներ են գործել Ազոխի, Դրախտիկի և Առաքելի համայնքներում: Շրջանում գործել են նաև Հայ Ավետարանչական և ՅՕԱԻ «Սոսե» մանկապարտեզները: Տող գյուղի դպրոցի մասնաճյուղում գործել է երաժշտական դպրոց, որտեղ ընդգրկված էին Տողի և Ուխտամորի նեթաշրջանների դպրոցների աշակերտները:

ԳԹԿ-ի կողմից նույնքան ամսին արտաքին ընթացիկ ստուգումներ են կազմակերպվել շրջանի հանրակրթական դպրոցների 4-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դասարաններում և 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում՝ ապրիլ ամսին: Պետական ավարտական քննություններին հայտարարվել է 21 դպրոցներից 150 աշակերտ և մեկ երկուսուցիցի աշակերտ՝ Ակնաղբյուրի դպրոցից: Շրջանի 14 դպրոցներից 55 աշակերտներ հայտագրվել են միասնական քննություններին: Ներկայացնենք պատկերն ըստ առարկաների:

Հայոց լեզվից և գրականությունից 33 աշակերտից միասնական մասով «անբավարար» է ստացել 4-ը, մաթեմատիկա առարկայի 24 մասնակցից՝ 10-ը միասնական, իսկ 2-ը՝ ավարտական մասով, հայոց պատմության 15 մասնակցից՝ 5-ը միասնական և 1-ը՝ ավարտական մասով, ռուսաց լեզվից մասնակցած 12 հոգուց միասնական մասով՝ 3 և 1 աշակերտ՝ ավարտական մասով, անգլերենի 11 մասնակցից 1-ը՝ միասնական մասով, ֆիզիկա առարկայի 9 մասնակցից 4-ը՝ միասնական և 1-ը՝ ավարտական մասով, կենսաբանություն առարկայի 7 մասնակցից 4-ը՝ միասնական, 2-ը՝ ավարտական մասով: Քիմիայից՝ 3, աշխարհագրությունից՝ 1 և համաշխարհային պատմությունից 3 մասնակցից 1-ը «անբավարար» գնահատական ստացող չի եղել:

Վերաքննությունները տեղերում կազմակերպվել են ժամանակին, և «անբավարար» ստացած աշակերտները դրական գնահատվելով՝ ստացել

են ատեստատներ: Բոլոր տեղյակ ենք, որ շրջանավարտների ատեստատները ձեռք ենք բերում 33-ից, այնտեղ մշակված է լինում շրջանավարտների ամուրը, ազգամուրը, հայրամուրը: Ինձ ժամանակին զգուշացրել են, որ տնօրեններին տեղյակ պահեն, որ լրացնելիս սխալները բացառվեն: Տնօրենները ժամանակին տեղեկացվել են, բայց Հաղորդից, Մեծ Թաղերից՝ 2-ական, Առաջամուրից ու Խանձածորից՝ 1-ական ատեստատներ լրացվել են սխալներով: Տնօրենները պետք է հետևություն անեն, աշակերտների փաստաթղթերն անձնագրերից լրացնեն ամենայն զգուշությամբ:

9-րդ դասարանիցիների ավարտական քննություններին մասնակցել են 19 միջնակարգ և հիմնական դպրոցների 108 սովորողներ: Սաքեսատիկա և հայոց լեզու առարկաների քննությունները կազմակերպվել են երեք քննական կենտրոններում: Հայոց լեզու առարկայի քննություններից երեք աշակերտ ստացել է «անբավարար» գնահատական (Քյուրաթաղ-2, Ակնաղբյուր-1), իսկ երեք աշակերտ չի մասնակցել քննությանը հարգելի պատճառով: Վերջիններս քննություն կհանձնեն օգոստոսի վերջին (Հայկավան-2, Ազոխ-1 (ներառական):

Դպրոցների տնօրենների կողմից տրված տեղեկությունների համաձայն՝ դպրոցներում առկա է 175 համակարգիչ, որոնցից գործող են 151-ը: 15 դպրոց ունի համացանցային կապ, 23-ը ապահովված է տպիչ սարքերով:

2014-2015 ուստարում շրջանի մի շարք դպրոցներում գործել է միջդպրոցակա ինտերակտիվ ցանցը: Այս կայքը պետք է հնարավոր պայման ապահովի՝ արագ և արդյունավետ հաղորդակցվելու ծնողների հետ: Մի շարք դպրոցներում այս գործընթացին մասնակցի արանցով են նայում, չնայած պետք է ասել նաև, որ ինտերնետ կապը չափազանց թույլ է, երբեմն ստիպված ենք լինում ժամերով սպասել:

Բոլոր դեպքերում սա դպրոցի գործունեության արդյունավետ վերահսկողության և ծնողների հետ կապի անմիջական պահպանման լավագույն ձևերից մեկն է, պետք է նոր ուսումնականից հնարավոր բոլոր դպրոցները ընդգրկել, իսկ հաջող գործունեության համար տնօրենները պետք է ամենօրյա վերահսկողություն սահմանեն դպրոցում: Այս աշխատանքի համար որպես պատասխանատու անձ մենք ճանաչելու ենք դպրոցի տնօրենին:

Բոլոր դպրոցներում ունենք օպերատորի հաստիք: Կարծես թե առկա են բոլոր հնարավոր պայմանները՝ ավելի արդյունավետ աշխատելու և բարձր արդյունք ապահովելու համար: Դասապրոցեսում կարևոր է ոչ այնքան աշակերտին նոր տեղեկություններ հաղորդելը, որքան նրանց մոտ սովորելու հնարավորություն և պահանջ ձևավորելը՝ գրքով, տեղեկագրով, համացանցով աշխատել սովորեցնելը, սեփական գործունեությունը պլանավորելը, ձեռք բերած արդյունքները գնահատել սովորեցնելը:

Ուսուցման ամբողջ ընթացքում ուսուցչի և աշակերտի համատեղ ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այն բանին, որ առանձնացվեն հանգուցային տարրերը, աշակերտը կարողանա ընկալել և գիտակցել ուսուցանվող նյութի կառուցվածքն ու կարևորությունը:

Ծիշտ ու տեղին ընտրություն կարող է կատարել այն ուսուցիչը, որը հմուտ է, ունի ճիշտ ընտրություն կատարելու վարպետություն, ստեղծագործական միտք, լայն մտահորիզոն:

Ուսուցիչը միաժամանակ պետք է հաշվի առնի չափորոշչային պահանջները և ճիշտ կռահի, թե լրացուցիչ ինչը կարող է ավելի լիարժեք և արդյունավետ ապահովել որակյալ դասի այդ պահանջը, քանի որ լրացուցիչ նյութը պետք է նաև խթան լինի նյութի լավ ըմբռնման համար: Տեղեկույթն անհրա-

ժեշտ պայման է կրթության լիարժեք իրականացման համար:

Ուսուցիչը դասարանում գործ ունի գիտելիքների տարբեր մակարդակ ունեցող աշակերտների հետ, ուստի ընտրություն կատարելիս պետք է հաշվի առնվեն դրանք: Այն, ինչ ընտրվում է որպես լրացուցիչ նյութ, պետք է հետաքրքիր և մատչելի լինի, միաժամանակ՝ երեխաների տարիքին համապատասխան: Պետք է ուշադրություն դարձնել նաև ընտրած նյութի ծավալին. այն ունենա բովանդակություն, սկիզբ և վերջ:

Անհրաժեշտ է պատրաստել սովորելու բավարար կարողություններով օժտված, տեղեկույթի որոնման, մշակման, պահպանման և հաղորդման ընդունակ, աշխատանքային շուկայի փոփոխուն պայմաններին ճկունորեն հարմարվող սերունդ:

Կրթության յուրաքանչյուր հաջող աստիճանում սովորողների ազատության սահմանները պիտի ընդլայնվեն, ինքնուրույն վճիռներ կայացնելու հնարավորությունները մեծանան, միաժամանակ բարձրաճանա պատասխանատվության աստիճանը:

Սովորողներին պետք է ներգրավել իրենց տարիքին հատուկ հետաքրքրություններով և ուսումնական հնարավորություններով պայմանավորված պրոբլեմների ոլորտ և գործնական ուղղվածության ուսուցմամբ ապահովել թե գիտելիքների իմաստավորված յուրացում, թե ստեղծագործական և հետազոտական գործունեության փորձի ձեռքբերում:

Բոլոր է տեղյակ ենք, որ ուսուցչի գործունեությունը բարդ, աշխատատար և պատասխանատու գործընթաց է: Նրա դերը կարևորվում է հատկապես հասարակության մեջ բարեփոխումների իրականացման գործընթացում՝ պահանջվող գիտելիքների ու արժեքների փոխանցման առումով: Բացի մասնագիտականից, կարևոր են նաև ուսուցչի բարոյական, անձնային որակները՝ որպես նրա մասնագիտական վարպետության անբաժանելի բաղադրիչ: Սա նույնպես համարվում է ուսումնական գործընթացի արդյունավետության երաշխիքներից:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու հմտություններն առավել կարևորվում են այն պատճառով, որ նա աճող սերնդին մշակութային ժառանգությանն ու սերունդների փորձին հաղորդակից դարձնողն է: Ուսուցչի անձը դառնում է սովորողի անձի ձևավորման հզոր գործոն: Ուսուցչի դիրքորոշումները, աշխարհայացքը, ճաշակը, վարքագիծը դառնում են աշակերտի անձի ձևավորման որոշիչ գործոն:

Ինքնագարգացումն անձի այն որակն է, որն ամենից շատ անհրաժեշտ է ժամանակակից մարդուն՝ առավել ևս ուսուցչին: Ինքնագարգացումը զարգացման բարձրագույն փուլ է, որի հիման վրա իրականանում են ոչ թե հախուռն, այլև ուղղորդված և գիտակցված փոփոխություններ: Այն ներքին պահանջմունք է, մասնագիտական ինքնագարգացման կարևոր պայման է ուսուցչի կողմից անհրաժեշտ փոփոխությունների գիտակցումը, գործելաոճի վերափոխման պահանջմունքը, ինքնակայացման նոր հնարավորությունների որոնումը: Մանկավարժի գործունեությանը ներկայացվող արդի պահանջները նրան մղում են վերանայելու իր մասնագիտական որակները: Նա բավականություն կամ անբավականություն է գտում իր մասնագիտական գործունեությանը և փորձում է ձևավորել իր վարկանիշը: Ինքնագարգացման նպատակը մասնագիտորեն նոր մակարդակի նվաճումն է, իր ներաշխարհը որակապես վերափոխելը, այն մանկավարժի կողմից շարունակական կրթության յուրահատուկ կազմակերպում է:

Հաշվի առնելով հասարակության կողմից ուսուցչին առաջադրվող պահանջները՝ ուսուցիչն ինքը պետք է

ընտրի և որոշի, թե զարգացման ինչ ձևեր, ինքնակրթության ինչ մեթոդներ կարող է ընտրել իր ինքնագարգացման համար:

Շրջանի 76 ուսուցիչներ մասնակցել են մախատեսաավորման վերապատրաստման դասընթացներին, և բոլորն էլ ատեստավորվել:

Հայեցի դաստիարակության հիմքը դրվում է մախադպրոցական հաստատություններում՝ պետական և ոչ պետական մանկապարտեզներ, մախադպրոցական խմբեր՝ չափորոշիչների հիման վրա մշակված կրթական ծրագրերով: Պետք է ասել, որ մախապատրաստական ավագ խմբի երեխան արդեն տիրապետում է որոշակի հմտությունների, նկարում է բնօրինակից, ստեղծում է բազմաձև մախշեր, զարգանախշում է տարբեր առարկաներ, կենդանիներ: Դաստիարակը, որ երեխայի համար եղելուհիություն է, նպաստում է երեխայի մտածողության և գեղագիտական ճաշակի ձևավորմանը՝ ծանոթության առաջին քայլերն անելով դեպի ազգային մշակույթ: Ուսուցչի պարճաճանա պատասխանատվության որոշմամբ գյուղական վայրերում, որտեղ երեխաների թիվը սակավ է, թույլատրվում է մախադպրոցական խմբում ընդգրկել 4 և 5 տարեկան երեխաներ: Գիշտ է, ոչ բոլոր դպրոցներում է, որ խմբեր են ձևավորվելու, բայց մեծամասամբ հարցը կարելի է համարել լուծված:

Տարրական դասարաններում մարտի 9-ի դասի հիմնական նպատակը կարգալու կարողությունների զարգացումն է: Ավանդական մեթոդներով դասընթաց իրականացնելիս ուսուցչին աշխատանք է բազմաթիվ աշակերտների հետ, որոնք ունեն կարգալու կարողության տարբեր մակարդակներ: Դասի ընթացքը դառնում է ձանձրալի այն աշակերտի համար, ով արագ է յուրացնում նյութը: Խմբային ուսուցման ժամանակ աշխատանքի ողջ ծանրությունն ընկնում է առավել ակտիվ և ընդունակ աշակերտների վրա: Պատիվ աշակերտները նման պայմաններում դարձնել մնում են սովորելու: Այս օրակարգում տարրական դասարաններում, և դասավանդող ուսուցիչների, և տնօրինության անդամները բավականին շատ են: Ուսուցիչները պետք է լինեն ավելի պահանջկոտ, իսկ չափորոշիչները՝ որպես հիմնական ուղեցույց:

Պետք է նկատի ունենալ, որ ցանկացած դասարան կազմավորվում է ըստ աշակերտների տարիքի: Սակայն միևնույն դասարանում գտնվող աշակերտներն ունենու են տարբեր մակարդակ և առաջ են շարժվում զարգացման տարբեր տեմպերով: Հարց է ծագում՝ ուսուցիչն ինչպե՞ս կազմակերպի ուսումնական գործընթացը, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա նյութը յուրացնել իր կարողությունների սահմաններում: Այս խնդրի լուծումը հնարավոր է իրականացնել շերտավորված ուսուցման միջոցով՝ որպես ուղեցույց ծառայեցնելով չափորոշչային պահանջների եռամակարդակ լինելու գործոնը՝ ուժեղ, միջակ և թույլ:

Թեմատիկ պլանները մշակելիս հարկ է ուշադրություն դարձնել չափորոշչային այն պահանջներին, որոնք նպատակ են աշակերտներին ներկայացվող որակական ընդհանրական պահանջների կատարմանը: Դասի պլանավորման հիմնական ուղեցույցը համարելով չափորոշիչը և դասի կառուցվածքը կարևորելով չափորոշչային պահանջների կատարումը՝ համոզված ենք, որ չափորոշիչների հիման վրա պլանավորված դասն ավելի լայն հնարավորություններ է ստեղծում ուսուցումը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար: Աղքատիկ է այն դասաժամը, որը կառուցվում է դասագրքի որևէ էջի հենքի վրա:

Այսօր ուսուցիչն ազատ է ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության հարցում, սակայն պատասխանատու է ձևավորելու և զարգացնելու

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՎ

2015-2016 ՈՒՍԱՐՈՒՄ ՈՒՍԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՅՄԱՆ ՀԻՄՆԱՆԻՐՆԵՐԸ

չափորոշիչներում ամրագրված կարողություններն ու հնտությունները:

Շրջանի թերհամալրվող ուսումնական հաստատություններում ի վիճակի չեն կատարել իրենց պարտականությունները լիարժեք և որակով:

Գյուղերում թեր համալրված դպրոցը տարածված երևույթ է: Բազմաձևակազմ դասարաններ չունենք Յարոսլավի, Մեծ Թաղերի, Ազդիսի, Տունու, Տողի, Դրախտիկի միջնակարգ դպրոցներում, մնացած բոլոր միջնակարգ և հիմնական դպրոցներում առկա են բազմաձևակազմ դասարաններ: Թվում է՝ գյուղական դպրոցի մեկ սովորողի վրա ծախսվող մեծ գումարները պետք է փոխհատուցվեն կրթության որակով: Սակայն ճիշտ հակառակն է. հիմնական պատճառը որակավորված մանկավարժների պակասն է, ուսուցիչներն ստիպված են դասավանդել նաև ոչ մասնագիտական առարկաներ, համարել տարբեր դասարաններ: Միավորված դասարաններում դասավանդման մեթոդիկաների բացակայությունը կամ եղածների ոչ նպատակային կիրառումը հանգեցնում է նրան, որ միավորված դասարաններում ուսուցիչներն աշխատում են ավանդական մեթոդներով:

Ավանդական մանկավարժության նպատակը գիտելիքների հաղորդումը, կարողությունների և հնտությունների ձևավորումն է, իսկ նորարարական մանկավարժության նպատակը՝ սովորողների ներքին հնարավորությունների բացահայտումն ու զարգացումը:

Ինչպես ամեն ուսումնական տարի, այս տարի ևս շրջանի դպրոցները մասնակցել են դպրոցականների առարկայական օլիմպիադային: Բարձր միավոր վաստակած 32 աշակերտներ մասնակցել են հանրապետական փուլին:

Ուրախությամբ նշեն, որ երկար դադարից հետո մենք այս տարի ունենք շոշափելի հաջողություններ: Շրջանն ունի 5 մրցանակային տեղ, որից երկուսը՝ 1-ին պատվավոր տեղ (հայ գրականություն, օտար լեզու): Ունենք մեկ 2-րդ տեղ և երկու 3-րդ տեղ: ԼՂՀ-ում 3-րդ մրցանակային տեղ գրաված մեր աշակերտը մասնակցել է ՀՀ եզրափակիչ փուլին և գրավել 1-ին մրցանակային տեղ: Մրցանակային տեղեր գրաված բոլոր աշակերտները մասնակցել են երևանում տեղի ունեցած համահայկական օլիմպիադային:

Բացի վերոհիշյալից, ակտիվ մասնակցության համար ԼՂՀ ԿԳՆ գովասանազորի է արժանացել 6 աշակերտ:

Դրվատանքի խոսք կարելի է ասել Հաղորդի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լյուբա Մայիսյանի, անգլերենի ուսուցչուհի Մարիա Ստեփանյանի, Մարիամաձորի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Սվետլանա Գրիգորյանի, Դրախտիկի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Մանվել Հովսեփյանի, Բանաձորի հիմնական դպրոցի գինղել Սասուն Ամիրջանյանի և այլոց մասին: Ս. Ամիրջանյանն ունի ընդամենը մի քանի տարվա աշխատանքային փորձ, բայց այս տարի նրա հաջողություններն ակնհայտ են. նրա աշակերտ էրիկ Գրիգորյանը ՀՀ եզրափակիչ փուլում գրավել է 1-ին պատվավոր տեղը և մեր երկրի նախագահի կողմից պարգևատրվել արժեքավոր նվերով, ուսուցիչը՝ 100000 դրամ գումարով:

Ակտիվ մասնակցության համար ԼՂՀ ԿԳՆ գովասանազորի է արժանացել 6 աշակերտ. 3-ը՝ հայոց լեզվից, 1-ը՝ պատմությունից, 1-ը՝ օտար լեզվից, 1-ը՝ ՆՁԴ-ից:

Հայոց լեզվի օլիմպիադայի շրջանային փուլին մասնակցել են 17 դպրոցներից 39 աշակերտներ, նրանցից 6-ը ստացել է «անբավարար»:

Այդ աշակերտները դպրոցական փուլում ստացել էին բարձր միավորներ՝ 14,15,16: Ինչո՞վ բացատրել այս հանգամանքը: Դա չի՞ նշանակում, որ ինչպես դպրոցի տնօրենը, այնպես էլ ստուգող հանձնաժողովը պատասխանատվությամբ չեն վերաբերվում այս կարևոր գործին:

Մասնագետների կողմից ստուգվել և մեթոդական օգնություն է ցույց տրվել Թաղաձորի, Առաջամուղի միջնակարգ, Այգեստանի և Խանձաձորի հիմնական, ինչպես նաև՝ Կանքի, Կարմրակուճի, Ծանձորի, Ծակուռու, Հայկականի և Արվագետիկի մասնաճյուղ-դպրոցներին: Մասնաճյուղ դպրոցների դժվարությունները, ինչպես վերը նշեցինք, մասնագետ ուսուցիչներով ապահովվել անհնարին է, իսկ նման դպրոցներից որակ պահանջելը պարզապես թյուրիմացություն կլինի:

Մյուս տարի ևս կրթության պետական տեսչության պետ Ս. Արզումանյանի կողմից ստուգվել է դպրոցների ղեկավար աշխատողների դասալսուների վիճակը:

«Լուսարարի» N 21-22-ում հաշվետվությանը, համոզված են, մեր մանկավարժները ծանոթ են, բայց ինչպես նախորդ ուստարվա օգոստոսյան խորհրդաժողովն էինք նշել, բացակայում է դասալսուների կատարման մեթոդը, դասալսման սկզբունք չկա, տնօրեն, փոխտնօրեն կարծես չեն առանձին՝ իրար հետ կապ չունեցող օղակներ են, չկա համագործակցություն, էլ չենք ասում այն մասին, որ համապատասխան բաժինները՝ եզրակացություն, առաջարկություն, լրացված չեն, ուսուցիչների ստորագրությունները բացակայում են: Այդ դասալսուների տեսքը տնօրենը կամ փոխտնօրենը կարող են նույն ձևով լրացնել իրենց առանձնատեսչական կամ տանը՝ բազմոցին թիկնած:

Տարեցտարի առավել նկատելի է դառնում դպրոցականների կենցաղում արմատավորվող առողջ սպորտակերպ: Այդ են վկայում հանրակրթական դպրոցներում անցկացվող ռազմամարզական, մասսայական միջոցառումները, որոնց ընթացքում էլ զարգանում, ամրապնդվում, կատարելագործվում են դպրոցականների ունակությունները, կարողություններն ու հնտությունները: Աշակերտների ռազմախայրենասիրական դաստիարակության գործընթացի երաշխավորներից են ռազմականացված հնգամարտի, ռազմականացված կրոսավազքի, «Արծվիկ» ռազմամարզական խաղերի, ԱԿ-74 ինքնաձիգից 11-րդ դասարանների տղաների միջև իրաձգության, ուժային եռամարտի մերթսեռական և շրջանային փուլերի նախապատրաստումն ու անցկացումը, ինչպես նաև ռազմադաշտային պարապմունքները:

Քանի որ յուրաքանչյուր սպորտային միջոցառում որոշակի աշակերտների քանակ է պահանջում, շրջանային միջոցառումներին դպրոցների մի մասը չի մասնակցում: Բայց մեր դպրոցական միջոցառումների կազմակերպումն անհրաժեշտ պայման է, դպրոցների տնօրենները պետք է վերահսկեն, որ այս կարևոր գործընթացում բացթողումներ չլինեն:

Սպորտային միջոցառումներին ակտիվ են մասնակցում շրջանից շրջան դառնալիս, Մեծ Թաղերի, Ազդիսի, Տողի, Դրախտիկի, Քյուրաթաղի, Ալմաղբյուրի, Թաղտոփի միջնակարգ դպրոցների թիմերը: Հարկ ենք համարում նշել Մեծ Թաղերի, Յարոսլավի ֆիզկուլտուրայի ուսուցիչներ Ռ. Ավետիսյանի, Ա. Սարգսյանի դրական աշխատանքը:

«Ասպետ» ռազմամարզական ճամբարում այս տարի ևս մեր շրջանից պետք է ընդգրկվեն 45 ճամբարականներ, բայց վերջին պահին Հաղորդի (գինղել՝ Ս. Սարգսյան), Տունու (Վ. Դամիսյան), Տողի (Ս. Գևորգյան) ուսուցիչները չեն ապահովել աշակերտների մասնակցությունը տարբեր պատճառաբանությամբ:

Ֆիզիկական դաստիարակությանը, ռազմական գործի ուսումնասիրմանը, հայրենասիրությանը դաստիարակմանը և ապագա զինվորի կայացմանն ուղղված մեր ֆիզիկների և զինղեկների ջանքերը որոշակի առաջընթաց են արձանագրել, բայց այն պահանջում է բարձր որակ և արդյունքներ, ինչը, հու-

սով ենք, նրանք ունակ են կատարելու, միայն թե ձգտում և վստահություն ունենան:

Մեր դպրոցների սաները հաջողությամբ են հանդես եկել հանրապետական առաջնություններում, մարզական և ռազմամարզական բոլոր միջոցառումների կազմակերպման և անցկացման գործընթացում մեծ օգնություն է ցուցաբերել վարչակազմի սպորտի գծով գլխավոր մասնագետ Ս. Դուկասյանը:

Ներառական կրթությունը դպրոցում բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, կրթական համակարգում ստեղծված են ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթության կարիք ունեցող անձանց համար:

Ուստարում Հաղորդի շրջանում ներառական կրթության մեջ ընդգրկված էր 45 երեխա, որից 14 աշակերտ՝ Հաղորդի, 8-ը՝ Ազդիսի, 2-ական՝ Տողի, Մեծ Թաղերի, Մոխրենցի, Դրախտիկի, Առաջամուղի, Ջրակուսի, Քյուրաթաղի և Ալմաղբյուրի միջնակարգ, 1-ական աշակերտ Հայկակուի, Ուխտաձորի, Նորաշենի, Մարիամաձորի, Կարմրակուճի, Այգեստանի և Բանաձորի դպրոցներում:

2014թ. սեպտեմբեր ամսին ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտները ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. նոյեմբերի 15-ի N 230/Մ հրամանի համաձայն՝ ստացել են վկայագիր առ այն, որ ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: 9 աշակերտի ուսուցումը կազմակերպվել է տնային պայմաններում: Կրթության շրջանային բաժնի բազմամասնագիտական շրջիկ թիմը եղել է դպրոցներում, գնահատել յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները: Ուսուցիչների հետ համատեղ թիմը մշակել է երեխայի անհատական ուսուցման պլաններ՝ ուղղված կարիքի բավարարմանը: Ներառական կրթության ամենամեծ չարիքն իրագրության պակասն է: Խնդիրն այն է, որ մեր ծնողների շատերը պարզապես չեն գիտակցում, որ իրենց երեխան խնդիր ունի, այդ խնդիրն պետք է լուրջ ուշադրություն դարձվի:

Ուստարվա մեր գրանցած հաջողություններն այն են, որ գնահատման ներկայացված 29 աշակերտներից 9-ը հաղթահարել է տարիքային փաթեթը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունի:

2014-2015 ուստարում Հաղորդի մանկապատանեկան մարզադպրոցում գործել են 20 խմբակներ՝ վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, ըմբշամարտ, սեղանի թենիս, թեթև քթակառք, ֆուտբոլ մարզաձևերով՝ 257 մարզիկներ ընդգրկված: Հանրապետական առաջնություններում մրցանակային տեղեր են գրավել բասկետբոլ՝ աղջիկներ, տղաներ՝ թեթև քթակառք, ըմբշամարտ, սեղանի թենիս մարզաձևերով:

Մարզադպրոցի սաներ Անդրեյ Ալեքսանյանը, Դավիթ Բաբայանը վոլեյբոլ մարզաձևով, իսկ մարզիչ Բորիս Բալյանը հանդբոլ մարզաձևով մասնակցել են ԼՂՀ և ՀՀ-ում օգոստոս ամսում անցկացված VI համահայկական խաղերին:

ԼՂՀ «Լավագույն մանկապատանեկան մարզադպրոց ստուգատես» մրցույթում Հաղորդի ՄՊՄԳ-ը գրավել է 3-րդ մրցանակային տեղը:

Մարզադպրոցի շենքի վիճակը բարձր է, շարունակվում է ձգձգվել հիմնանորոգման աշխատանքը:

Ուստարում ՄՊՄ կենտրոնում գործել է 25 խմբակ՝ 320 սովորողների ընդգրկմամբ (Հաղորդի, Մարիամաձորի, Տողի, Ազդիսի, Բանաձորի, Քյուրաթաղի, Այգեստանի համայնքներում):

Խմբակները բախված են հետևյալ կերպ՝

- գեղարվեստական ստեղծագործական բաժին
- գեղարվեստական արհեստի

ստուդիա.

- տեխնիկական ստեղծագործական բաժին:

Ուստարում բացվել է «Ազգային գուլպա» (շաթալ գուլպա) խմբակ Ազդիսի միջնակարգ դպրոցի բազայի վրա:

Սեպտեմբերի 2-ին՝ ԼՂՀ հռչակման կապակցությամբ, մասնակցել են Ստեփանակերտում կազմակերպված ցուցահանդեսին:

«Ազգային գորգարվեստի» մրցույթ-փառատոնում, որը կազմակերպել է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը գործելիս ժամրով, «Արցախի գորգ» աշխատանքով գրավել են առաջին տեղը:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և զբոսաշրջության վարչության կողմից ստացված հրավերներով կենտրոնը 2014-2015 ուստարում հանդես է եկել ցուցահանդեսներով և հայկական ազգագրական պարերով «Արցախյան գինու», «Թժվի», «Ճեմգյալով հացի» և «Թթի» փառատոններում:

Հունվարին մասնակցել են ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված «Մշակութային խաչմերուկ» մրցույթ-փառատոնին և 5 ժամրով գրավել մրցանակային տեղեր (1-3 տեղերը):

Մասնակցել են ՀՀ գեղագիտական ազգային կենտրոնի կողմից կազմակերպված նկարիչների ցուցահանդեսին, և նկարներից 4-ը անցել են 2-րդ փուլ:

Հաղորդի շրջանի հանրակրթական դպրոցների 60 աշակերտներ ամառային հանգիստն անց են կացրել ՀՀ «Ծովինար», «Հանքավան» և Շուշիում կազմակերպված ճամբարներում: Առաջին անգամ Պաշտպանության բանակում ծառայող սպաների 8-10 միավոր առաջադիմությամբ սովորող երեխաների համար նույնպես կազմակերպվել է ճամբար: Գնաբարձարականների առօրյան ըստ երկարաժամկետի եղել է հետաքրքիր, միջոցառումները՝ բազմաբնույթ:

Կրթությունը կատարվել են վերանորոգման, ներկման և սպիտակեցման աշխատանքներ:

Քյուրաթաղի և Մարիամաձորի միջնակարգ դպրոցներում կատարվել են լամինատապատման աշխատանքներ: Կրթություն է տեղափոխվել 1300 խոր և վառելիքային: Կարելի է ասել, որ դպրոցները պատրաստ են նոր ուսումնական տարվան:

Կրթության շրջանային բաժինը, «Հաղորդի շրջանի հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ-ը, դպրոցների տնօրինություններն անհրաժեշտ աշխատանք են կատարել 2015-2016 ուսումնական տարին հաջող սկսելու ուղղությամբ: Ինչպես նախորդ ուսումնական տարիներին, այս տարի ևս 1-ին դասարան հաճախողները կստանան 20 000-ական դրամ:

Կրթությունի տնօրենները բաժին են ներկայացրել Մախնաձորի ցանցը և նախնական դասաբաշխումը:

Ուսուցիչ թափուր տեղերի համար հայտարարված է մրցույթ:

Նոր ուսումնական տարին հանրկենտրոն է բաղաբական կարևոր իրադարձության հետ: Սեպտեմբերի 2-ը ԼՂՀ հռչակման օրն է, որը հանրապետությունում նշվում է մեծ հանդիսավորությամբ:

Շնորհավորում են բոլորին ԼՂՀ հռչակման օրվա և նոր ուսումնականը սկսելու առթիվ: Ցանկանում են խաղաղություն, առողջություն և բեղմնավոր ու ստեղծագործ աշխատանք:

Է. ԴԵՏՐՈՍՅԱՆ  
Հաղորդի շրջակարգավի  
աշխարհակազմի կրթության  
բաժնի վարիչ

ՆԱՅԱՅԸ

ԻՄ ԵՎ ՔՈ ՍԵՎԱԿԸ

Խոսել Պարույր Սևակի մասին՝ նշանակում է խոսել մեծ հայի ու մեծ մարդասերի մասին... Սեկ անգամ և վերապրենք նրա ապրածի չափունչը՝ ապրելու անհրաժեշտության գիտակցումը...

...Տեսնենք տարեկան էի, երբ ավագ քրոջիցս լսեցի Սևակի մահվան բոթը: Ծանոթ չէի բանաստեղծի ստեղծագործությանը, կենսագրությանը: Քույրս սկսեց պատմել նրա մասին՝ ցավով ու անասելի արհեստանքով: Այն պիսի մի տխրություն իջավ սրտիս, որ տարիներ անց ամեն անգամ վերհիշելիս նույն զգացումն են վերապրում...

Ուզում են խոսք ասել մի համճարեղ բանաստեղծի, լեզվաբանի ու գիտնականի մասին, որի ստեղծագործության և կենսագրության գաղտնարանները դեռ շատ ուսումնասիրողներ կթափանցեն՝ հայ թե օտար:

Սիրելի՛ Պարույր, ժամանակի դեմ Մեծ խիզախում էր Քո երգը հպարտ, երգ՝ անմոռուկի, «Եղիցի լույսի»... Տքնանքդ ապրելու Դեղատոմս եղավ, Կյանքդ՝ հուր-լեզենդ Զոհաբերումի...

Մեծ բանաստեղծի պոեզիան, նրա գիտական վաստակը, խոհափիլիսոփայական գեղաբանդակ ասույթները, ապրած կյանքի արժեքավոր, զարմանահարաշ դրվագները հիացմունք ու խանդավառություն են առաջացնում ընթերցողների սրտերում:

Ազատություն, խաղաղ ու երջանիկ կյանք երազող երգիչ է Սևակը: Բանաստեղծական հանգերն անգամ կապանքներ էին, խանգարում էին: Նրա երգն ազատ էր, անկաշկանդ, արտառուչ զրույց էր մարդու հետ մարդու մասին...

Այո՛, նա մարդկանց, ովքեր չէին հանդուրժում իրենց նմանների գոյությունը: Բանաստեղծը զարմանքով ու ատելությամբ է գրում այն մասին, թե ինչ դաժանությամբ էին տեղահան անում հայերին իրենց իսկ բուն հայրենիքից: Ծնվեց մի կոթող, մի գիրք-հուշարձան, որի լույս աշխարհ գալն էլ առաջին հերթին պայմանավորեց գրողի տեղը մեր բազմադարյան գրականության մեջ: Դա «Անլուծելի զանգաստուն» է: «Ջանգակատունը» ոչ միայն Գայտե մեծ եղեռնի դառապարտումն է, այլև ողջ մարդկությանը հասցեագրված զգոնության դաս՝ սեփական ժողովրդի կորստյան ցավի գեղարվեստական պատկերավորումով: Հայ ժողովրդի բարեկամ Միխայիլ Դուդինը գրել է. «Նա գիտեր, որ ուրիշի վիշտ չի լինում, և կարողանում էր ամբողջ աշխարհին կարեկցել բառ ու բանով, իսկ բառը նրա գործն էր, նրա ճակատագիրը»:

Ականջ դրեք Պարույր Սևակի զանգին...»: Ջանգի դողմանը կհնչի, մինչև աշխարհը կզգա, համընդհանուր դատաստանով կկանխի 20-րդ դարի ազգասպանության կրկնությունը՝ զավթ սերունդների համար:

Չարանալի է Սևակի լեզվամտածողությունը, բառօգտագործման բացառիկ տաղանդը, մայրենիի հանդեպ պաշտամունքի հասնող սերը... Բառը, եթե չի գործածվում, գործիքի պես փտում կամ ժանգոտվում է: Որպիսի՞ ճոխություն և առավել ևս ճկունություն ունի բանաստեղծի փառաբանությունը մայրենիին.

Դու մեր մեծ երթի գավազանակիր եվ մեր պատմության մեծագույն դիվան, Մեր ազնվության գովասանագիր, Մեր մտքի պահեստ, հոգու օթևան, Անցյալին պարզված դու մեր լսափող եվ մեր խոսափող՝ զավիթին ուղղված: Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով, Նարեկացիով օծված ու յուզված:

Սևակից սովորելու դասերը հարուստ են ու կենսական: Նախ և առաջ մայրենիի մեծագույն ուսուցիչ է նա. հայոց լեզուն խորությամբ սովորելու, մեր խոսքի արժեքը գիտակցելու կարողությունն է կարևորում գիտնական բանաստեղծը: Մենք զնուն ենք դեպի Սևակը, սովորում ենք նրանից, լսում ենք նրա ծայրը, խորհուրդն ու հորդորը...

Հուշերն են պատմում: Գրչակից ընկերների հետ հաճախ էր լեզվական խաղեր մախածեռում Սևակը: Բառակազմական խաղերի ժամանակ ընկերներին զարմանք էին հարուցում շատ անծանոթ բառեր, որոնց առաջարկ

կողմ Պարույրն էր: Չէր գոռոզանում, ներողամտորեն ժպտում էր: Այդ պահերին նա համեստ ուսուցիչ էր, ընկերները՝ գիտելիք ամբարող աշակերտներ: Բառարանը նրա տարերքն էր. կարդում էր այն հետաքրքրությամբ, որով վեպ, վիպակ ու պատմվածք են ընթերցում ուրիշները:

Շեղված չեն լինի նյութից, եթե ասեն, որ իմ ղեկավարած դասարանի (7-րդ) աշակերտների հաճախ են հրամցնում բանաստեղծի պոեզիան և կենսագրության ուսանելի փաստերը: Յոթերորդիցիներ Աննան, Սոսեն և Շուշանը անվանի բանաստեղծի պոեզիայի երկրպագուներն են:

Իսկ Աննան այս ուսումնականում 9-րդիների կազմում մասնակցել է հայոց լեզվի առարկայական օլիմպիադային և հանրապետական փուլում զրավել մրցանակային 3-րդ տեղը: Ի դեպ՝ նրա շարադրության նյութը Կոմիտասն էր: Եթե ավածին ավելացնեն այն, որ համակերպի դեմքով աղջիկը նաև չափազանց աշխատասեր է, համառորեն սովորում է, հոգնել չունի, ապա գրվածքիս նպատակը կհաստատվի: Հաճելիորեն կարելի է անցում կատարել և ասել, որ Սևակը մոլի ընթերցող էր, ընթերցում էր՝ ինչ ձեռքն էր ընկնում: Դարվիցի «Տեսակների ծագումը» ընթերցել է մինչև վերջ՝ շատ բան չհասկանալով: Այսպես ներկան անցյալի դասի սերտումն է դառնում («Անցյալը ներկայացած»):

Պարույր Սևակն իր արմատների կրողն է. ծնողների հանդեպ առանձնակի սեր ու գուրգուրանք ուներ նա: Մի՞ թե դրա ապացույցը չէ այն անզուգական բանաստեղծությունը, որը նվիրել է իր մորը, համայն աշխարհի մայրերին: Դա բանաստեղծություն է՝ հասցեագրված զավակներին: Բանաստեղծը հորդորում է սիրել մորը ջերմ ու քնքուք սիրով, սատարել նրան օր ծերության... Այս կենսական գեղարվեստական քերթվածքը պիտի դառնա ոչ միայն տոնական օրվա փառաբանության, այլև ապրելու ուղեցույց ու հավատամք.

Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար Մեզ աշխարհում ծնած, սնած, Մեզ այսարհում շահած, պահած, Մեզնից երբեք չկշտացած, Փռչի սրբող, լվացք անող, Անվերջ դատող, անվերջ բանող այս ձեռքերը, Թող որ ճաքած ու կոշտացած, Բայց մեզ համար մետաքսի պես խաս ձեռքերը:

Բանաստեղծի թուլությունը երեխաներն են: Նա իր խոսքով մարդկանց հորդորում է ազնիվ ապրել, ապրել մանկան պես մաքուր, անկեղծ, անքաբոյց մտքերով.

Թող կործանվեն այնպես ապրած ու բանարած,

Որ նորածին մանուկների դեմքով ծնվեն... Բանաստեղծը իր սերը բաշխում է աշխարհի բոլոր մանուկներին.

Չէ՞ք նկատել արդյոք, որ աշխարհում Տգեղ մանուկ՝ երբեք, Աշխարհում բոլոր մանուկներն են սիրուն... Կյանքի չարիքը չափազանց շատ է, և երեխայի դաստիարակությունը մեծ ջանքեր է պահանջում: Այս հիմքով «Եղիցի լույսի» մուտքն ազդարարող բանաստեղծությունը խորիմաստ ավարտ ունի՝

Ինչքան էլ ծանր է մանուկ քաղելը, Մանուկ պահելը ծանր է ավելի:

Մարդու աստվածացումը սիրելու շնորհի մեջ է: Սևակը ծնրարդման հասնող պաշտամունք ուներ կնոջ հանդեպ: Նրա գունագեղ, խորաթափանց ու հավերժ թարմ սիրո երգերը այդ են հաստատում: Իսկ «Ուշացած իմ սեր», «Երգ երգոց», «Նահանջ երգով» պոեմները սիրո ու նվիրումի համանվագներ են:

Թող հիշեն, որ երբ Սիրած սրտերն են բաժանում գոռով, Նրանց կապում են առավել սիրով:

Սևակը մարդկային հարաբերությունների ծալքերն է բացում, սիրուն և ատուն, խոստովանում ու խոստանում, նաև զղջում... Այսպես ամբողջանում է «Մարդը ափի մեջ» շարքը, որը հայ գրականության (և ոչ միայն) մարդերգության գոհարներից է:

Սիրելի՛ ընթերցող, երբևէ քեզ հարցնե՞լ ես, թե քանի բանաստեղծություն անգիր գիտես այս շարքից: Մեկին չես կարող առավելություն տալ մյուսի հանդեպ: Սևակը ժխտում է չարը, ամնարդկայինը («Ատուն են»), հաստատում ցանկալին, բարին, հանգիստ արարումը

(«Ուզում են»): Ապրելու իմաստը ոչ միայն քո բարեկեցության ապահովումն է, այլև դիմացինի օգնելու պատրաստակամությունը: Բարեգործությունը, առավել ևս զոհողությունը մարդկային բարոյականության գերագույն արժեքն է.

Ես ծնվել եմ նրա համար, Որ ցավածին մխիթարեմ. Տահելների հարսանիքին, Ձեռքիս զինի՝ զվարթ պարեն: Եթե շուրջս խավար լինի՝ Մարդկանց համար փայլատակեմ, Հասակով մեկ փովեմ գետնին՝ Վստահության ճամփան փակեմ...

«Մարդը ափի մեջ» շարքը մի գողտրիկ բանաստեղծություն ունի՝ «Գժվում են»: Տարօրինակ ոչինչ չկա: Գործը ոգևորումով, սիրով ու նվիրումով պիտի կատարվի... Սա այն դեպքն է, երբ բանաստեղծության վերլուծությունը դառնում է մեղք: Ուղղակի պետք է անգիր անել, արտասանել՝ վարակելով լսողներին:

Եվ ինձ լսելով՝ Կարող եմ ասել. «Գժվե՞լ է, ի՞նչ է». Իսկ ես էլ կասեմ. «Այո, գժվե՞լ եմ, Ինչո՞ւ չգժվե՞լ: Իսկ գժվելով չե՞մ սիրում ու ապրում: Իսկ գժվելուց չե՞՞ փայտը ճարճատում: Առանց գժվելու չկա շահած մարտ: Առանց գժվելու չեն ծնի մոր մարդ: Մինչև չգժվի՝ ջուրը չի՞ եռա, Կեղև չի պատռի հատիկը նռան: Ծառե՞րն են փթթում՝ Գժված են անշուշտ: Երկի՞րն է պտտում՝ Գժված է անշուշտ: Մերմերը մինչև կարգին չգժվեն՝ Բերք չեն դառնալու: Թաքերը մինչև կարգին չգժվեն՝ Ձեռք չեն դառնալու: Բառերն էլ մինչև կարգին չգժվեն՝ Ե՛րգ չեն դառնալու...

Ա՛խ, ուր էր թե ես միշտ գիժ լինեի... «Մարդը ափի մեջ» շարքի «Ուզում են» բանաստեղծությունը ձևի և բովանդակության ներդաշնակություն է: Նրանով բանաստեղծը ատելության խոսք է ուղղում պատերազմի հրծիգներին և անհանգստանում երկիր մուրակի ճակատագրի համար.

Ի՞նչ, տրաքվել է հարկավոր, Թող տրաքվի մանկան փուչիկ խաղալիքը, Այն էլ եթե անդրակ է, Ոչ թե արդար և մեղավոր Մեր մարդկային մուրակը... Ես ուզում եմ...

Այն են ուզում՝ ինչ ամենքդ... Մարդ արարածը լավին, բարուն, հագվածյուտին ձգտող է: Իմ գիտակցական կյանքում ձգտող են Սևակի անձի ու գործի, ձգողականությունը հսկակամալ: Նա թե՛ իր կենսագրական դրվագներով, թե՛ ստեղծագործական նորարարությամբ, անկեղծությամբ ու խիզախությամբ դարձել է ինձ համար կենսական պահանջ, ապրելու օրինակ: Հուսահատության պահեղանջ բուժում է Սևակը, խոսում է քեզ հետ: Այդ խոսքը լսելի է դառնում, երբ ունկնդրում ես նրա լուսաթաթախ ու անաչառ քերթվածքը: Սևակը իմն է, քոնն է, բոլորինս է: Սիրելի՛ Պարույր, շնորհակալ եմ, որ կաս, որ մարդիկ արբենում են քեզնով: Ահա Սևակը.

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի

Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում...

Ասելիքս ուզում են ամբողջացնել Հրաչյա Հովհաննիսյանի գնահատական-բանաստեղծությանը: Ուղղված սիրելի գրչընկերոջը: Կանգնած կանաչ սարի լանջին, Արևն առած որպես ծնծղա, Ծիծաղում է մի խանձաղեն Ու հաստաշուրթ գեղջուկի տղա: Ծիծաղում է ու թվում է՝ Նա ծնվել է աշխարհի մեջ Մի շա՛տ երկար կյանքի համար, Որ պիտի գա՛, որ պիտի գա՛...

ՇԵՔԻԱԹ՝ ԱՌԱՅՑ ՉԱՐ ՇԵՐՈՍՆԵՐԻ

Արահը, որի լուսամուտներից այդ առավոտ հորդում էր ամռան արևը, ծիածանվում էր մանկական երանգներով: Այդ առավոտ այստեղ հյուսվում էր մանկության հեքիաթի հերթական դրվագը, որով էլ փակվելու է հեքիաթի «Մանկապարտեզ» անվանումը կրող երջանիկ էջը:

«Հրաժեշտ մանկապարտեզին» տոնն է հմնապատում: Այո՛, այո՛, զուր չասացի խնայապատում, այլ ոչ թե խնայապատի մանկապարտեզում: Սա տոն է համայնքի համար, հերոս ժողովրդի մի մոր ձեռքբերում. կայացած մանկապարտեզ՝ անձնուրաց և արիեստավարտ աշխատողներով:

Դպրոցահասակ 13 ամսիկներն ակնհայտ չփոքված են համընդհանուր ուշադրությունից: Դեռ չեն հասցրել սրտի ուզածի չափ վայելել իրենց սիրուն տոնական շորերը, չեն հասցրել զմայլվել սրահի բարձրաճաշակ ձևավորմամբ, չեն կարողացել մանկական անկեղծ հրճվածքով զոհեն մի երկու փուչիկ պայթեցնել, երբ արդեն հայտնվել են տեսախցիկի ու բազմաթիվ ֆոտոխցիկների նշանառության տակ: Անգամ կինոաստղերը հազիվ դիմանային դերասանական վարպետություն պահանջող նման երկարատև ֆոտոսեսիայի: Նրանցից մեկ պահանջվում էր ժպտալ, մեկ լրջանալ, մեկ գրկել մայրիկին, մեկ էլ կողքին կանգնած ընկերոջ ուսով զգել ձեռքը: Չէ՞ որ արդեն մի բանի ժամից սոցկայքերում ծանոթ-բարեկամների հավանությանն արժանանալու համար պետք է հավուր պատշաճի տեսք ունենալ:

Միջոցառումը սկսվելուց պես սրահն ափեափ լցվեց հուզմունքով: Հուզմունք, որ ծնունդ էր առնում ծնողների հայրտության և դաստիարակի՝ իր քրտնաջան աշխատանքը լիովին փոխհատուցած տեսնելու զգացողությունից: Մանուկների հետ արդյունավետ աշխատելու շնորհը, անշուշտ, ի վերուստ ամենքին չէ տրված: Դաստիարակ Անուշ Ասրիյանը կարողացավ մեր երեխաների համար դառնալ ոչ միայն գիտելիքի առաջին աղբյուր, այլև մարդկային վեհ հատկանիշներ մարմնավորող ընդօրինակման արժանի առաջին կերպար:

Քաղցրահունց ծայրով երգող իր սանիկներին անթաքույց պարծանքով էր նայում նաև երաժշտության դեկավարը՝ ընկեր Գայանեն: Փոքրիկները ոչ միայն հիացրին բազմաթիվ կատարումներով, այլև երաժշտական գիտելիքներով: Ապշել կարելի էր՝ լսելով, թե ինչպես են նրանք թվարկում երաժշտության համաշխարհային մեծությունների դժվար արտաբերվող անունները:

Հպարտանալու ոչ պակաս առիթ ուներ նաև մանկապարտեզի տնօրեն Լուսինե Մանվելյանը, որն աշխատում է այս հաստատությունում արդեն մեկ տասնամյակից ավելի (նախ՝ որպես դաստիարակ, իսկ 2008 թ.-ից՝ տնօրեն): Անգնահատելի է նրա ներդրումը մանկապարտեզի կայացման գործում: Միայն բանիմաց, խստապահանջ, բայց և հանդուրժող տնօրենի դեկավարությամբ աշխատող կուլետիկն է ի գորու դաստիարակել երեխային համերաշխության և միաբանության մթնոլորտում:

Միջոցառման ավարտին երեխաներն ամոթխած հայացքներով ծաղիկներ նվիրեցին բոլոր աշխատողներին՝ ի նշան երախտագիտության: Առայժմ նրանք չեն կարող բառերով արտահայտել այն ամենը, ինչ զգում են այդքան ժամանակ իրենց գուրգուրանքով շրջապատած իրաքանչ ու անասհման բարի մարդկանց հանդեպ: Նրանք, անշուշտ, կուզեին ասել մորաքույր Գայային, թե որքան համով էին նրա եփած ճաշերը, իսկ Մերի քույրիկին՝ դաստիարակի օգնականին, ասել, որ մայրական ջերմություն էին զգում նրանից, երբ քնեցնելիս շոյում էր իրենց գլուխը:

Մանկությունը կիեռանա անվերադարձ՝ բոլոր սիրելի դեմքերն ու հուզառատ պահերը դաջված թղթերով նրանց հիշողության մեջ: Թող որ այսօր ծնողներն են նրանց անունից երախտագիտության խոսք ասում, իսկ վաղը հենց իրենք ամեն քայլափոխի, թեկուզ և մտովի, երախտապարտ կլինեն իրենց առաջին ուսուցիչներին:

Ասում են՝ մանկությունը նման է անծանոթ երկրի, որտեղ ծնողներն ու զավակները, լինելով միևնույն լեզվի կրողները, հաճախ խոսում են լրիվ տարբեր լեզուներով՝ այդպես էլ չկարողանալով հասկանալ իրար: Հուսկայան այդ պայծառ առավոտը ես հրաշալի հասկանում էի հանդիսատեսի առաջ շվար կանգնած վեցամյա որդուս՝ Հայկին, որի անհանգիստ շարժումներն արդեն մատնում էին վրա հասնող հոգնածությունը: Նա անգամ հեռվից իմ սրտի զարկերին հանընթաց նրա սրտիկի անհամբեր զարկերն էի լսում կարծես, իսկ ուղեղս լույ մի միտք էր գրադեցնում այդ պահին. «Կյանքի դավերին անտեղյակ այս փոքրիկներին պահապան եղիր, Տեր»: Հանձնված են՝ նույնն էին մտածում բոլոր ծնողները, քանզի բոլորն էլ գիտեն. մանկապարտեզը նրանց կյանքի միակ հեքիաթն էր, որտեղ չկային չար հերոսներ:

Ելելինա ՂՈՒՋԱՆ Ավանդույրի Վարդան Զիվանշիրյանի անվան միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

Մեղինա ՄԵԺԼՈՒՄՅԱՆ Ծնող

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՈՒԹՅԱՄ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ



Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակում, ԼՂԴ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հրավերով սփյուռքագետ, պատմական գիտությունների թեկնածու Քնարիկ ԱՎԱԳՅԱՆԸ Արցախ էր այցելել մոր՝ ցեղասպանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վերժինե Սվազյանի հետ: Գիտության ազնիվ մշակների ընտանիքի զավակը, բնականաբար, պիտի քայլեր ծնողների հետքերով, և, ինչպես տիկին Վերժինեն է ասում, 90-ականների ցուրտ ու մութ տարիներին, մոսկի լուսի տակ, երեքով՝ ինքը, ամուսինն ու դուստրը, սեղանի շուրջը բոլորած, յուրաքանչյուրն զբաղվել է իր աշխատանքով՝ հավատալով հայ ժողովրդի լուսավոր գալիքին: Գրի ու գիտության համար անբարենպաստ ժամանակների առջև բարեխիղճ գիտնականները երբեք չընկրկեցին և ստեղծեցին մնայուն արժեքներ: Ի դեմս Քնարիկ Ավագյանի՝ ճանաչեցի պատմագիտության միջոցով մշակին և համեստափայլ գիտնականին, ով դասավանդում է ՀՀ ԳԱԱ-ի մագիստրատուրայում, նաև աշխատում է Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում՝ որպես առաջատար գիտաշխատող:

**Տիկին Քնարիկ, դարեր շարունակ արտագաղթը հայության անբաժան ուղեկիցն է եղել և է: Ի՞նչն է պատճառը, արդյո՞ք «Որտեղ հաց՝ էնտեղ կաց»-ն է նրանց ուղղորդում:**

- Ես չեմ կարծում, որ միայն հացի համար են գնում, որովհետև բավարար կենցաղ ունենցողներն էլ գնում են, և հիմնականում հենց բարեկեցիկ կյանքով ապրողներն են գնում: 90-ականներին, երբ Արցախի ժողովուրդը հերոսաբար պայքարում էր, կռվում-արյուն էր թափում, մենք էլ թիկունքում, ցուրտ ու մութ, կիսակուշտ-կիսաքաղց տարիներին կարելության չափով աշխատում էինք տոկալ և հայրենիք պահել: Բայց ես այսպիսի միտում են տեսնում՝ եթե 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ամերիկյան բողոքական քարոզիչները կրթալուսավորական քողի ներքո եկան օսմանյան տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստան, և տարածքը սկսեց արտահոսքի դիմել, նպատակը՝ տարածքը քրիստոնեաբափելն էր, ապա Խորհրդային Հայաստանում, այսպես ասած, երկաթե վարագույրը գրեթե կասեցրեց արտագաղթը: Խորհրդային կարգերի փլուզումից հետո մուտք գործեցին կրոնական աղանդներ, ամերիկյան և ընդհանրապես արևմտյան հասարակական կազմակերպություններ ստեղծվեցին, համալսարան ստեղծվեց, որի առաջին շրջանավարտների մեծ մասը ամբողջությամբ արտահոսեց Միացյալ Նահանգներ, և այդ ամենի արդյունքում ուղեղների արտահոսք եղավ: Արտագաղթը ամենամեծ չարիքն է, որովհետև գնացողներն իրենց հետևից տանում են հարազատներին, ընկեր-բարեկամներին, հարևանին, այսպես՝ շղթայական ռեակցիայի պես վերջը չի երևում: Երիտ մուսուլման էլ օսմանյան կայսրությունը պարպկեց միսիոներների գործունեության և ամերիկյան քաղաքականության արդյունքում: Մինչդեռ ռուսական կայսրությունը արգելում էր բողոքական կամ կաթոլիկ քարոզիչների գործունեությունը, մի խոսքով՝ արևմտյան գաղափարախոսությունը կրոնական քողի տակ մուտք գործի իր տարածք: Որովհետև գիտե, որ նրանք, ըստ էության, ոչ թե կրոնական կամ մարդասիրական նպատակներ են հետապնդում, այլ ուզում են իրենց երկրի ազգային ակունքները խաբլիլել: Ի դեպ, շատ արևմտահայերի, որոնք ավետարանական եկեղեցու հետևորդներ էին, ամերիկյան միսիոներները ուղարկում էին Արևելյան Հայաստան, Ղա-

րաբաղ, Շուշի... Չէ՞ որ Շուշին ազգային-մշակութային կենտրոն էր, հայ կրթական-լուսավորական օջախ, որը պետք էր քանդել: Բարեբախտաբար, ռուսական կայսրությունը նրանց վտարում էր երկրից, և բողոքական քարոզիչները՝ ի դեմս արևմտահայ հայրենակիցների, մուտք չունեցան Արևելյան Հայաստան:

**- Սփյուռքի պատմությանը Ձեր քաջատեղյակությունն ի՞նչն է հուշում. կա՞ որևէ երկիր, որը հայ ինքնության պահպանման համար բարենպաստ միջավայր է:**

- Չեմ կարծում, թե կա այդպիսի երկիր: Լինելով Ամերիկայի, Արևմտյան երկրների և Մերձավոր Արևելքի հայ գաղթօջախներում, շփվելով նրանց հետ/հատկապես վերջին տարիներին գնացածների մասին է խոսքս՝ ես զգում եմ, որ բոլորն էլ ավստասնք են ապրում, զգում են, թե ինչպես իրենց զավակներն իրենց ձեռքից գնում են՝ օտարանալով, ծուլվելով, ինտեգրվելով նոր միջավայրին:

**- Այսօր Մերձավոր Արևելքը դարձել է մոլորակի «ամենաթեժ» կետը: Ի՞նչ դեր էր վերապահում Արևմուտքին այս հարցում և որպես պատմաբան՝ ի՞նչ գաղափարներ եք կանխատեսում:**

- Մերձավոր Արևելքում, հատկապես Սիրիայում տեղի ունեցող արյունահեղության համար կարծես թե Արևմուտքի քաղաքական առաջնորդների սիրտը ցավում է, կարծես թե իրենց մտահոգությունն են հայտնում, բայց սայլը տեղից չի շարժվում: Փաստորեն այդ մուսուլման ձեռագիրն է՝ ժամանակին քրիստոնեաբափեց՝ սկսեց արտահոսքով, իսկ հետո նաև ֆիզիկական բնաջնջմանը աչք փակեց, երբ Օսմանյան կայսրությունում հայերին կոտորում էին: Հիմա էլ այդ տարածքը, որը քաղաքակրթության օջախն է՝ շունչներով, Ասորեստանի, Բաբելոնի, ըստ էության՝ մարդկության քաղաքակրթության օջախն են վերացնում, որը ընթանում է նույն Արևմուտքի քար, սֆինքսային լուսթյամբ:

**- ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագիրը կարելի՞ է համարել հայրենադարձության մոր փուլի սկիզբ:**

- Ես շատ եմ մտածել այդ հարցի շուրջ և կարծում եմ, որ խորհրդային տարիներին լայն հնչողություն ստացած «Հայրենիքն է կանչում», «Հայրենիքը սպասում է իր զավակներին» հայրենադարձության կոչող կարգախոսները հետագայում սփյուռքում

ձևախեղվեցին, ուստի՝ հիմա նոր մուտքում է անհրաժեշտ: Իսկ սա հայրենաճանաչության կոչ է, դրա տակ ես նաև ծնողական հորդոր եմ տեսնում՝ բավական է դրսերում թափառես, հայ՝ զավակ, դարձիր քո տուն: Այն ժամանակ ասում էիր՝ Հայաստանը կարմիր է, դրա համար չենք գալիս, հիմա Հայաստանը կարմիր-կապույտ-նարնջագույն է, բայց դու նորից չես գալիս, ուրեմն, թույլ տուր, որպես ծնող, քեզ ասեմ՝ արի տուն: Ոչ թե հայապահպանության պիտի մենք Սփյուռքը պահենք-օրորենք, այլ՝ հողապահպանությամբ. դա է՛ Արցախն է, և՛ Հայաստանը: Բավական է դրսերում փոշիանանք, օտարներին ծառայենք և օտար երկրները ծաղկեցնենք, գանք և տեր կանգնենք մեր մայր հողին:

**Ի՞նչն են ցույց տալիս Ձեր ուսումնասիրությունները. սփյուռքահայությունը ունի՞ այդ գաղափարի գիտակցումը:**

- Մայր Հայաստանի դերն էլ հենց նա է, որ իր կորած-մոլորյալ զավակներին, որոնք ուզում են, բայց վերադառնալու այդ քաջությունը երբեմն չունեն, պիտի ճանապարհ ցույց տա, հնարավորություն ստեղծի: Երբ գալիս էինք Արցախ, ճանապարհին տեսանք, թե ինչպես բնակարաններ են կառուցվում սիրիահայերի համար, նույն ձևով էլ Հայաստանի մյուս շրջաններում, սահմանամերձ գոտում, նաև Երևանում բնակարաններ կառուցվեցին, ինչպես որ մեծ հայրս՝ Գառնիկ Սվազյանը, 1936 թ. իր «Ներգաղթը» պիեսը, որ գրեց Եգիպտոսում, այն ժամանակ ներգաղթի տեսլականը անհրաժեշտ էր քվում, բայց ոչ նրա համար: Նրա այդ պիեսը մինչև օրս Սփյուռքում միակ գեղարվեստական և գաղափարական ստեղծագործությունը մնաց հայրենադարձության թեմայով: Վերջերս Սփյուռքի նախարարությունը մեծ միջոցառում էր նվիրել Գառնիկ Սվազյանի 110-ամյակին և նախատեսում է վերաբեմադրել այդ պիեսը՝ հուսալով, որ այն կդառնա նոր ներգաղթի սկիզբ, որովհետև, ինչպես մեծ հայրս էր ասում, հայության փրկությունը և ապագան Հայաստանի մեջ է:

**- Այս տարի աշխարհի ողջ հայության ուշադրությունը սևեռված է Յեղսապետության ճանաչմանը և հայոց պահանջատիրությանը: Հնարավոր՞ էր եք համարում հայ-թուրքական հաշտությունը. ինչքան էլ աշխարհի այս կամ այն երկրները որոշումներ ու բանաձևեր ընդունեն, այնուամենայնիվ, ինքը թուրքիան պիտի առերեսվի իր**

**պատմությանը և ընդունի իր կատարած ոճիրն ու հանցանքը:**

- Ես կարծում եմ, որ ժամանակը ամեն ինչ պիտի իր տեղը դնի, ինչպես Արցախը ազատագրվեց՝ իր ուժերով, առանց օտար տերությունների վրա հույս դնելու և նրանց կողմից ճանաչման հույս ունենալու: Նույն կերպ էլ մենք: Նպատակային իմաստով՝ ոչ Արևմուտքը, ոչ էլ այն երկրները, որոնք այդ տարիներին կանգնած են եղել թուրքիայի թիկունքում, երբեք չեն ճանաչելու, ցավոք սրտի, չեն էլ ընդունելու: Ինչի որ մենք հասնենք, մեր ուժով, մեր զենքով, մեր բազկի, խելքի ու մտքի ուժով պիտի հասնենք: Արցախը դրա առաջին օղակն էր և վառ օրինակը:

**- Ի՞նչ տպագրված աշխատություններ ունեք:**

- Տպագրված է իմ դիսերտացիոն աշխատանքը՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը սկզբնավորումից մինչև 1924թվականը»: Հիմա շարունակում եմ 1924 թվականից հասցնելով մինչև մեր օրերը:

**- Դուք ունեք նաև ուսումնասիրություններ՝ նվիրված հայ կամավորական շարժումներին Սփյուռքում, որքանո՞վ և ինչպե՞ս են նրանք օգտակար եղել անցյալ դարի պատմական դժվարին ժամանակաշրջանում, ինչպիսի՞ նպաստ են բերել բնօրրանին:**

- Արցախյան պատերազմին ևս Սփյուռքի մեր հայրենակիցներն իրենց մասնակցությունն են ունեցել կամավորական շարժման տեսքով, նաև՝ նյութական աջակցությամբ: Անշուշտ, ֆիզիկական մասնակցությունն անհամեմատ ավելի նվազ է եղել, քան անցյալ դարասկզբին կովկասյան կամավորական շարժման, կամ կիլիկյան կամավորական շարժմանը նրանց ներգրավվածության առումով: Այսպես, եթե Առաջին աշխարհային կամավորական շարժման, կամ կիլիկյան կամավորական շարժմանը նրանց ներգրավվածության առումով: Այսպես, եթե Առաջին աշխարհային կամավորական շարժմանը մասնակցելու համար Սփյուռքից ներգրավվել է արտերկրի շուրջ երեք հազար հայություն, իսկ Կիլիկիայի կամավորական շարժմանը անդամագրվել էր հինգ հազարը՝ միայն Միացյալ Նահանգներից, ապա Ղարաբաղյան շարժման տարիներին այդ թիվը խիստ նվազել է՝ մնայուն մասնակիցների առումով հասնելով մոտ երկու տասնյակի: Իսկ ժամանակավոր, կարճատև մասնակցություն են ունեցել ամենաշատը 200 կամավորական: Սա բացատրվում է տասնամյակների ընթացքում Սփյուռքում տեղի ունեցող անխուսափելի սերնդափոխությամբ և խառն ամուսնություններով, ինչպես նաև մեր քաղաքական տարբեր կառույցների աշխատանքով, որը հիմնականում միտված էր հայապահպանության խնդրին՝ չնեղառելով իր մեջ հայաստանակենտրոն առաքելություն: Հայապահպանություն, ազգապահպանություն՝ դրսում, բայց ոչ՝ հողապահպանություն, որովհետև հայրենիքից դուրս չկա ազգ:

**-Անշուշտ, եթե երբեմն տեսնելով 4-րդ կամ 5-րդ սերնդի սփյուռքահայի, ով դեռ կարողանում է հայերեն խոսել,**

**սել, ուրախանում ենք, ապա մոռանում ենք, որ նա, որպես քաղաքական անհատ, հայ չէ:**

- Ցավոք սրտի, Ղարաբաղյան պատերազմը ցույց տվեց՝ սերնդափոխության հետևանքով ինչպես է փոխվել Սփյուռքի պատկերը: Արտերկրում նրանք հասել են խորհրդանշական հայապահպանության, որը անհույս ու անհեռանկար մի գործընթաց է, սրտի մխիթարություն, որ երեխան հաճախի դպրոց, գոնե հայերեն տառերը գիտենա և այլն: Բայց քաղաքական առումով, Հայաստանի, Արցախի ռազմավարական շահերի տեսակետից նրանք, ըստ էության, անելիք չունեն: Դա է վկայում նաև այն փաստը, որ նրանք, ուսում, կրթություն ստանալով Արևմուտքում, իրենց երկրների քաղաքացիներն են և պարտավոր են այդ երկրների շահերը հետապնդել ամեն տեղ, այդ թվում նաև՝ Հայաստանում, որտեղ այդ երկրների քաղաքական շահերը հակադիր են:

**- Ձեր խոսքերն ինձ հիշեցրին գրող, հրապարակախոս Վարդգես Պետրոսյանի «Հայկական էքզիզներ»-ից մի դրվագ՝ երիտասարդ մի ամերիկահայի խոստովանությունը, ում ծնողները հայ են, իսկ իր հայկական ծագումը նա բնախոսական դիպված է համարում: Նա ավելորդ ժամանակաշրջանում է համարում գլուխ հոգնեցնել, թե որ երկրից են նրանք եկել Ամերիկա և ինչու. ինքն իրեն ամերիկացի է համարում և այսպիսի դաժան խոստովանություն անում. «Ենթադրեմք, որ պատերազմի մը պարագային, օդաչու եմ, և ինձ հրաման տրվեցավ ռմբակոծել Երևանը: Առանց տատանելու պիտի գործադրեմ հրամանը»:**

-Ղարաբաղյան պատերազմի տարիներին մենք ունեցանք երրորդ սերնդի ներկայացուցիչներ՝ Մոնթե Մելքոնյանը, Կարո Բախթեջյանը, որոնք, ցավոք, զոհվեցին: Մոնթեն ծնվել էր Ամերիկայում, իսկ Կարոն Մերձավոր Արևելքից էր փոխադրվել Ամերիկա: Նաև Շահե Աճեմյանը, ով այսօր շարունակում է բնակվել Հայաստանում, նա չի եռացավ Ամերիկա՝ ասելով, որ վաղուց էր ուզում հաստատվել այստեղ, բայց քաղաքական հանգամանքների պատճառով դա հնարավոր դարձավ միայն 1999-ին: Արցախում կռվելուց հետո նա փորձեց վերադառնալ Ամերիկա և շարունակել ապրել այնտեղ, բայց հասկացավ, որ ամերիկյան ապրելակերպն այլևս իր համար չէ: Սա այն դեպքն է, երբ հայրենաճանաչությունը դառնում է հայրենատիրություն: Ինձ համար շատ ուրախալի է, որ մեր ժողովրդի մի զգալի հատվածը գիտակից է, տեր է իր հողին, հետևաբար նաև մենք հեռանկար-ապագա ունենք՝ Հայաստան-Արցախ: Ցանկանում եմ, որ մեր սփյուռքահայերն էլ գան, վերցնեն իրենց բաժինը Հայաստան-Արցախից և հաստատվեն հայրենի սուրբ հողի վրա:

**Հարցազրույցը՝ Մելանյա ՄԻՆՈՆՅԱՆԻ**

ՇԻՐԱԶ - 100

ՇՈՎ. ՇԻՐԱԶԻ «ԹՈՆՈՂԱԿԵՑԻՆԵՐ» ՊՈՆՏԱԸ



«Բազում ինչ աստուածային... ուրացյալ է ի Գոցանէ: (Գր. Նարեկացի)»

Շիրազյան մեծարումները սակավ են. նրա կատարած ազգօգուտ աշխատանքների արժեքները հավուր պատշաճի չէ: (Ս.Ս.)

Մեծատաղանդ գրող Շովի. Շիրազի ծավալուն և լավագույն պոեմներից է պատմափիլիսոփայական էպիկական «Թոնողակեցիները» (Ե., 2014, 328 էջ՝ Սամվել Մուրադյանի քսանվեց էջանոց հոդվածով ու խմբագրությամբ): Այս գործը, հիսուն տարվա փակակնքից հետո, վերջապես լույս տեսավ: Նրա շարունակություն «Անին» էր (2011), որը ևս նման ուշացումով էր հրատարակվել: Գեղիմասկի այս երկու պոեմները սկզբից համատեղված էին, բայց հետագա մշակումների ժամանակ ծավալուն դարձան, նպատակները, բառագործառնական ոճերը այլաբերույթ, ուստի առանձնացվեցին: Մեծ մտածող Շովի. Շիրազը պատմականության ամբողջական գերին չդարձավ (թեման 9-11-րդ դարերի սկզբի կարևոր ընդհանրացումն է՝ եկեղեցական բանավեճի մանրամասնված նկարագրությամբ. հեղինակն ազատ օգտվել է գեղագիտական հնարավորություններից՝ պատմական ժամանակահատվածները նույնիսկ խախտելով): Ժողովրդական ուժը համայնք ստեղծելու կապակցությամբ նաև հազարամյակ առաջ եղավ հայ իրակառուցումը: Հիմնական, ճանաչված ղեկավարը, ծավալուն աշխատանքն իրացրածը Սմբատ Ջարեհավանցին է: Նա աստվածաբանություն, փիլիսոփայություն, բնագիտություն, աստղաբանություն, բժշկագիտություն տիրապետող հասարակ անձ էր (ծնված Ծաղկոտն գավառի Ջարեհավան գյուղում): Ջարեհավանցու համախոհներից էին՝ Վրվեռ, Հակաբոս Հարթացի, Թորակ, Արքայիկ՝ Արքա Հարթացի, Հրանուշ, Ախնի, Կամարա (որոնք իբր մտածում էին ժողովրդի ու իրենց ազատության համար), իսկ սրանց հակընդդեմ այլ կերպարներ են՝ Գրիգոր Մագիստրոս (Փիլիսոփոս), Աստղիկ սարկավագ, իշխաններ՝ Վարազ Բզունցի, Ռահ Ռշտունցի, Վրեն Վանանդյան, Վարդ Աղենունցի, Մամիկոնցի, Շիրակաշենցի, Տրապ-

տունցի ևն: Շինական թոնողակեցիների ու այլոց խռովքը այդ պոեմում պայթար էր հացի համար, ազատության համար: Նրանց ուժը պատել էր առավել շատ եկեղեցուն, ուստի ժխտում էին կրոնավորներին, որպես Աստծո ավելորդ միջնորդների՝ ձրի հացակերների, գյուղացիներից ավելորդ հողատարածներ բռնագրավողների: Նաև մերժում էին Քրիստոսի աստված հայր ունենալը, աստվածացվելը: Նրան մարգարե էին համարում: Թոնողակեցիների կողմից եկեղեցու ժխտմամբ վտանգվում էր հայոց լեզվի, կրթության հարցը, որը նաև Շովի. Շիրազի համար խոր ցավ էր և ճշգրիտ մոտեցում: Օտար և մեծ, ուժեղ ազգերի հավասարության, լեզուների ոչ խտրականության քարոզը հայերի համար շահավետ չէր, ծուլման վտանգը միշտ կար և առ այսօր շարունակվում է (Շիրազը թոնողակեցիների նպատակների առավելությունն ու թերությունը հոյակապ հասկացել էր, քանի որ այդ նույնի կատարելագործված նպատակները հետապնդող խորհրդային կարգերի բոլոր էտապներն ապրել և առավելություններն ու թերությունները հոյակապ տեսել էր մանկուց, և, որպես մեծ մտածող, մեծ հեղինակ, պատմական ճանապարհի ճիշտ մտածողությամբ է քննարկել, սովել անհրաժեշտ ու համապատասխան գեղագիտական իր հայեցակետերը): Հայ ժողովրդի ծուլման վտանգին նպաստում էին նաև Հայաստանի հզոր պետությունները՝ հատկապես քրիստոնյա Բյուզանդիան: Թոնողակեցիների կողմից առաջ էր քաշվում նաև հասարակության երկու սեռերի հավասարության հարցը, ժխտվում էր ընտանիքը, որով սերունդ, բանակ ունենալու հարցն էր վտանգվում բոլոր ժամանակների հասկացողությամբ (մեծ բանաստեղծն այս հարցը պոեմում առաջ է քաշել բազմաթիվ ձևերով): Թոնողակյան պայքարը պատմության մեջ տևական է եղել ու տարբեր վերուվարումներ է ունեցել: Մեծ բանաստեղծ Շովի. Շիրազի նպատակը եղել է այդ շարժման ճիշտ ու սխալ կողմերի բացահայտումը, որը պոեմում երևում է մեղադրյալների հարցաքննման ժամանակ (եկեղեցական դատավարություն՝ նաև թագավորի, սպարապետի մասնակցությամբ՝ երկխոսության ոճով Անին մայր տաճարում): Սա հեղինակի կողմից նաև ոճական նպատակադրում է՝ ցույց տալ վերին խափի աշխատանքը, վերաբերմունքը, համապատասխան լեզվագործառնությամբ: Նախերգանքում ու վերջերգանքում տրված են հեղինակային հակիրճ ընդհանրացումները՝ լեզու, հավատ, հայրենիք: Հասարակության երկու սեռի անդամների հավասարության, կրոնի ավելորդության հարց եղավ նաև հազարամյակ հետո ձևավորված խորհրդային կարգերի ժամանակ (Վահագն Դավթյանը թոնողակեցիների պատմական թեման համարում էպիկական պոեմում շատ կողմերով իրեալականացրած է ներ-

կայացրել, որպես իր ժամանակաշրջանի հասարակարգից հազարամյակ առաջ եղած՝ նույն սաղմերն ունեցած կացութաձև, ուստի Շովի. Շիրազից հետո գրած նրա պոեմը լույս տեսավ (Ե., 1961թ.), իսկ Շիրազինը՝ ոչ): Մեծ գեղագետ Շովի. Շիրազի թոնողակեցիներ պոեմի թեման նախորդում է Անին թեմային (Թոնողակեցիներում Սմբատ Բագրատունի արքան երիտասարդ էր, Անինում արդեն հասուն այր ու միշտ կրում էր նաև Օհան (Չովհաննես)-Սմբատ անվանումը, իսկ Թոնողակեցիներում՝ հասուն սպարապետ Վահագն Պահլավունցին Անինում արդեն ծերացող էր, բայց երիտասարդական ավյունով): Մեծատաղանդ Շովի. Շիրազի պատմափիլիսոփայական վիպերգ «Թոնողակեցիներ» պոեմն ունի երեք մաս՝ տարբեր զուլխներով ու նախերգանք և վերջերգ: Նախերգանքում առաջ է քաշվում նաև ճիշտ իրավաբանական օրենսգրքի հարցը՝ երբ անմխիթար Մխիթար Գոշը Դատաստանագիրքն ավարտին հասցուց... (35), որից հետո Աստծո որդու պատգամով շատ լավատեսական ու դժնի հարցեր ընդհանրացնում Գոշի տեսիլքով, հավելում էր ճանաչման, Քրիստոսի հավատի կայունության, արդարության գործը և տալիս հեղինակի եզրակացությունը՝ Եվ սպասում է, ահա, Մայր Անին Բոլոր մեղքերի սուրբ դատաստանին (37): Վեջերգանքում ըմբոստ պապերի պայքարի, հայ ժողովրդի միասնության և այլ հարցեր է հակիրճ արծարծում: Այստեղ նաև դժգոհ ժողովրդի պայքարն է հավելվում՝ Ելնում էին ու խելահեղ Նորեն էին ախուրյանվում... (325), և մեծ Շիրազը գտնում, որ առանց հավատի ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆ չի լինի. Ով մարդ, մի բանի պիտի հավատասա՝ Մարդուց վեհ բանի, որ աստվածանաս: Թեկուզ չլինի՝ պիտի հավատասա, որ Աստված լինի, որ գեթ մարդ մնաս (326): Սամվել Մուրադյանը նշում է՝ Առողջ մտածողությամբ ու սթափ հայացքով, անկուսակցական ու անկողմնակալ պատմագետի խորաթափանցությամբ է բանաստեղծը մխրճվել հայոց պատմության խորքերը և այնտեղից պեղել ներկա ու գալիք սերունդների համար անհրաժեշտ և ուսանելի կարևորագույն դրվագներ, վերակերտել է դրանք գեղարվեստի լեզվով՝ գրեթե միշտ տալով իրողությունների և պատմական անձնավորությունների գեղարվեստականացման բացառիկ հաջող օրինակներ (10): Եվ ահա Թոնողակեցիներ պոեմում Օհանես Սմբատ արքայի (աստծո սուվեր. 299), սպարապետ Վահագն Պահլավունցու կերպարները ներկայացվում են որպես անթերի ղեկավարների (Անի պոեմի վերջում տրվում է արքայի գաղտնի դավաճանությունը, այսինքն՝ երկրի ծանր վիճա-

կից էլնելով, իբր խուսափել է ավելորդ արյունահեղությունից և իր մահից հետո Անին կտակել բյուզանդացիներին՝ նորակառույց վանքում ինքնասպան լինելով. բայց ժողովուրդը չի համաձայնել և էլ էլ է պայքարի), իսկ կաթողիկոս ծեր Հուսիկ Աղավունցն հենց Թոնողակեցիներում, մեղմ ձևով, շինականների հողը յուրացնող է ներկայացրել (220): Հեղինակն իր շիրազական կարողությունների սահմաններում ներկայացնում է թոնողակեցիների մեղադրման օրերի ընթացքում պարմանի, գեղապան (219) արքայի հոգեկան ասպրումները, զգացումները չքնաղ թոնողակեցիներին տեսնելիս բանտարկյալի շղթայված իրավիճակում, հատկապես ազնվականական ծագմամբ նրբալիք Կամարայի մերկ իրաշամարմինը (216)՝ հետևից՝ ներքևի երկու փափուկ մասերի (214) խաչ դաջվածքները, որոնք լրբանուշ քաջությամբ (218) օժտված Կամարան, ցուցադրելով, որակել է որպես՝ սպի՝ աչքերն իմ որդու (214): Որն է «Թոնողակեցիներ» ծավալուն պոեմի գեղագիտական վեհ նպատակի հետևությունը: Այն, որ ժողովրդի բողոքն ու պայքարն անտեղի չեն լինում: Գիշտ է, ունենում է վերուվարումներ, բայց դրանք ապագային քայլեր են դառնում հատկապես թշնամիներով առեցցուն պահերին: Հայրենիքի օրհասական պահին ժողովուրդը միասնական ոտքի է ելնում՝ հայրենիքը պաշտպանելու: Քանի որ լինում են ճակատագրական պատահականություններ, ուստի առիթից օգտվում է թշնամին: Օրինակ՝ դատավարության ժամանակ, երբ բանադրումը դեռ չէր կայացել, բոլորը ձգտում էին դարձի բերել մեղադրյալներին, Թորակ Թոնողակեցու՝ Հայտնի մորից, Գաղտնի հորից, Եվ ինքն իրեն վեր հիսուսեց (301) հակաքրիստոնեական համարձակ, ծանր խոսքերը լսելով, մի հակաթոնողակեցի խաչի գավակ Մի սարկավագ (301) ուշակորույս եղած կաթողիկոս Հուսիկ Աղավունցու ձեռից վերցնում է ծանր խաչը և մահացու հարված հասցնում երիտասարդ թոնողակեցու ճակատին: Մահանում է թոնողակեցի երիտասարդ Թորակը՝ սիրեցյալ Կամարայի ձեռքերին, մայրն է դուստրը ներս խուժում, որդուն կանչում: Կատարվում է անսպասելի՝ որդեկորույս մայրը խելագարվում է, արևախավարում է կատարվում, կարծես որպես երկնային պատիժ: Իբր առիթից օգտվում են յոթնյակ թոնողակեցիները և փախուստի են դիմում (միշտ յոթնյակ է նշվում, երբ մեկը՝ Թորակը, հենց այդ ժամանակ մահացավ, մյուսը՝ Կունծիկը, քիչ առաջ էր զղջացել սխալն ու հավատի եկել, խաչասպաշտների կողմն անցել. երկի բանահյուսական յոթ թվին չի դավաճանել մեծ Շիրազը): Բայց, պատահական առիթից օգտվելով, քրիստոնեական բանավեճից ճողոպրել է չբանադրված՝ աղվեսադրոշմ չստացած, խուսմբ: Հետո ձերբակալվել են

արաբների կողմից ու Աբլ-Բարբիի հրամանով մահապատժի ենթարկվել մահմեդական դաժանությամբ: Առանց հավատի անհնար է. հավատն ուրանալ էլ դավաճանություն է: Ահա նաև շիրազյան ընդհանրացումներից մեկը: Մեծատաղանդ Շովի. Շիրազը, պատմական իրողություններով առեցցուն այս պոեմում կարողացել է իցույց հանել լեզվաոճական իր բարձր, համաժողովրդական, բազմաբերույթ արվեստը, հատկապես աստվածի բարձր ոճի գործածություն, լեզվաշինարարական հմտություն, բառերնորության վարպետություն, բանականակցական դիպուկություն, ծավալուն խոսքի փոխարինում մի բաղադրյալ բառով, ինչպես՝ մայրամուտով սուզն Անին... ահով բարբառում (39), ...քուն բեր մահահանգույն Դև յոթին էլ այն մեղսավոր (40), Նիզակ մոթերն անշեղ, Ջորավարներն իր փաղանգի... առնայա ու առնագեղ (41), Թոնողակեցիք կանգնած էին Մի լեռան պես յոթնագագաթ (42), մտքի մրջնիկ (52), իմաստուն մրջնիկ (289), գայլավագրացող պիղծ անհավատ, մտքի կածան, մոլորամիտ, մոլորագնաց, մոլորաշաղկող (142), հայ պաղվոսյանք (116), խոսքով՝ Հիսուս, գործով է Հուդա (Կունծիկ աբեղան. 181), Թոնողակի քահր (182), Հույժ է գեղիկ մարմնագեղ (207), Սև կրքամուրը՝ բաժակուն ոսկի (207), խարույկել (201), համայնքել, տմարդանալ, սրբախոս, մեղսահաշտ (81), թոնողակալիք (Կամարան. 201), լրբախոս, մեղմազայր (201), պերճադիմված (205), տեղալով հողն իր վանքատակում (220), թիկունքվեցան (234), քաջուհիք (218), հարձուհիք (216), որձուհիք (226), Բայց համբուրեցին հայացքով խոցուն խոլ թոնողակեցիք մեծ թոնողակեցուն (250) և այլն: Շովի. Շիրազը հայ բանավեճի այն զարմանահարաշ մեծությունն է, որ հատուկ անուններից կերտել է բազմաթիվ խոսուն նորաբանություններ՝ գոյական, ածական և բայ խոսքի մասերով, ինչպես՝ ախուրյանվել (325), անհիսուսանալ (175), հիսուսարեն (225), հիսուսամարմին (306), թոնողականալ (53)՝ թոնողակել (248), թուրանաթուր (248), տորապայ (296) և այլն, որոնք անփոփոմ են ծավալուն խոսքը: Միայն Թոնողակ հատուկ անունից գործածել է հիսունից ավելի բառույթ՝ բառավերջի կով և առանց դրան, որոնց մեծ մասը նորաբանություններ են, ինչպես՝ թոնողաբողոք (146), թոնողազուլխ (52), թոնողազորք (246), թոնողալիք (201), թոնողալուտ (47), թոնողախուս (113), թոնողախև (181), թոնողակածին (101), թոնողակամեծ (100), թոնողահայր (116), թոնողատգի (164), թոնողավագր (225) և այլն: Սրանով ևս երևում է հայերենից նվիրյալ մեծ գեղագետի լեզվաշինարարական անբավ տաղանդը:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ  
Բանասիրական գ.թ., դոցենթ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ  
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ  
Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info  
Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրպարություն վարելու պարտավորություն չի ստանձնում:  
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաբանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:  
Ստորագրված է տպագրության՝ 29.08.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: